

ԴՈՆԱՐԱ ԿՍՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎԱՍԱՓ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ «ԲԺՇԿԱՐԱՆ ԸՆՏՐԵԱԼ ՏԱՐՐԱԿԱՆ  
ՄԱԼՈՅԻ» ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐ

Սերաստահայ բժշկական դպրոցի ժամանակագրական առումով մեզ հայտնի առաջին բժշկագիտական երկը պատկանում է XVI դ. ճանաչված մատենագիր Հովասափ Սերաստացու գրչին:

Հեղինակի պատմագրական, բանաստեղծական, նկարչական և գրչական գործունեությունը դեռ անցյալ դարի 60-ական թվականներից գտնվել է հայ բանասիրության քննության շրջանակներում:

Այսուհանդերձ ուսումնասիրողների ուշադրությունից մինչև վերջերս դուրս է մնացել Հովասափ Սերաստացու գործունեության մի կարևոր բնագավառը՝ նրա բնագիտական գործունեությունը: Միայն վերջերս ակադ. Լ. Խաչիկյանի կողմից գիտական շրջանառության մեջ դրվեց այն փաստը, որ Հովասափը հեղինակել է բնագիտական բնույթի մի գործ, որի մեջ քննարկվում են տեսական-դեղագիտական, սաղմնաբանական, կաղմախոսական ու բնախոսական կարևոր խնդիրներ: 1971 թ. իր «Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ.» ուսումնասիրության մեջ, ուր քննության առարկա է դարձել միջնադարյան հայ բնագիտական միտքը իր տարրեր դրսևորումներով, մեծանուն գիտնականը առաջին անգամ վկայակոչում է Հովասափի հեղինակած «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական գործը ու բնութագրում այն, որպես միջնադարյան բնագիտության մի արժեքավոր գործ<sup>1</sup>: Այսօր արդեն հայտնի են այդ աշխատության երկու ձևագիր ընդօրինակություններ հեղինակային հիշատակարաններով, դրանցից մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7049 ձևագիր-բժշկարանն է<sup>2</sup>, իսկ մյուսը Զմմառի վանքի մատենադարանի № 212 ձևագիրը<sup>3</sup>:

Հովասափ Սերաստացու հեղինակած բժշկարանի գիտական քննությունը գալիս է հավաստելու, որ ի դեմս Հովասափի հայ բժշկագիտությունն ունի բավական ինքնատիպ մի բնագիտ:

«Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» գործը իրենից ներկայացնում է փոքրածավալ, բայց յուրօրինակ ու արժեքավոր մի ստեղծագործություն,

1 Լ. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1971, ՀՍՍՀ ԳԱ, № 2, էջ 23—43:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 32:

3 Ն. Ակիմևան և Հ. Ոսկևան, Յուցակ հայերեն ձևագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հատոր Բ, Անտոնյան հավաքածու, Վիեննա, Մխիթարյան տպ., 1971, էջ 209:

որի առաջաբանն իսկ պատկերացում է տալիս այդ գործում բնութիւյան առարկա դարձած բնագիտական խնդիրների մասին:

Մեր կողմից կատարված բանասիրական և աղբյուրագիտական համեմատական բնութիւյունը ցույց տվեց, որ այս երկի ստեղծագործական աղբյուրներն են եղել Ամիրզոյլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» ծավալուն երկասիրութիւյան առաջին՝ «Ուսումն բժշկութեան» տեսական բաժինը, նույն հեղինակի «Անգիտաց անպէտ» ընդարձակ դեղաբառարանի առաջաբանը, միջնադարյան տարրեր բնույթի ձեռագիր ժողովածուներում հանդիպող «Ի շորից գոյացեալ ասի մարդ, դի շորք պատճառք են եղելութեան» բնաբանով անհեղինակ գործը (որը նվիրված է շորս տարրերի ուսմունքին) և XIV դ. հայ հանրագիտ-փիլիսոփա Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» հանրագիտական աշխատութիւյան հինգերորդ՝ «Յաղագս լինելութեան մարդոյն» տիեզերագիտական-բնագիտական հարցերին առնչվող բաժինը:

Բժշկարանի այդօրինակ քաղվածական բնույթն, անշուշտ, դույզն իսկ չի արժեքազրկում այդ գործի գիտական նշանակութիւյունը, բանի որ հեղինակը, նախ, այդ բոլոր բժշկական-բնագիտական աղբյուրները մեխանիկորեն չէ որ օգտագործել է, այլ ստեղծագործաբար ի մի բերելով բնագիտական այդ նյութը, սիստեմավորված հետևողականութեամբ շարադրել է տվյալ բնագիտական-բժշկական խնդիրների մասին արդեն իր՝ թող որ ազդեցութիւյուն կրած, տեսակետը: Թերևս այս դեպքում խոսք կարող է գնալ լոկ ազդվածութեան, և ոչ՝ փոխառութեան մասին: Եվ հետո շափազանց արժեքավոր է այդ գործն՝ իր կիրառական նշանակութեամբ: Փաստորեն Հովասափ Սերաստացին իր այս գործով օժտել է ժամանակի բժիշկներին որոշակի բնագիտական գիտելիքներով՝ որոնք անշուշտ, ըստ ամենայնի, օժանդակել են միջնադարյան հայ բժշկագիտական մտքի զարգացմանը:

Հովասափի բնագիտական հայացքների հիմքում ընկած է ողջ միջնադարում գերիշխող 4 տարրերի վերաբերյալ ուսմունքը: Սա ինքնին հասկանալի է: Դեռ անտիկ շրջանում (մ. թ. ա. V դ.) հույն բժիշկ-փիլիսոփա էմպեդոկլեսի կողմից տեսութեան վերածած իր ժամանակի համար առաջադեմ բնափիլիսոփայական այդ ուսմունքը որպէս ստեղծագործական աղբյուր հարատևեց գրեթէ ամբողջ միջնադարում:

Հայ միջնադարյան մտածողները (Եղնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Հովհաննես Իմաստասեր) ամենատարբեր առիթներով բնագիտական-բնափիլիսոփայական, կենսաբանական բնույթի իրենց աշխատութիւյուններում դիմել են շորս տարրերի ուսմունքին, որը բեկվելով հայ մտածողների ինքնատիպ բնափիլիսոփայական ընկալումներով տվել է զարմանալի յուրակերպ արտահայտութիւյուններ:

Մասնավորապէս, շորս տարրերի վերաբերյալ Դավիթ Անհաղթի՝ իր ժամանակի համար զարմանալի առաջադեմ մատերիալիստական մեկնաբանումների, Հովհաննես Իմաստասերի «հակադրութիւյունների ներդաշնակութեան» և հավերժութեան ինքնատիպ դիալեկտիկական հայեցակետի, ընդհանրապէս միջնադարյան հայ բնափիլիսոփայական առաջադեմ մտքի ֆոնին Հովասափ Սերաստացու բնափիլիսոփայական ըմբռնումները շորս տարրերի ուսմունքի վերաբերյալ, կարելի է որակել որպէս շափազանց ավանդական: Հովասափը նույնպէս գտնում է, որ երկրի վրա գոյութիւյուն ունեցող խիստ բազմազան

էականերն ու մարմինները արդյունք են 4 տարրերի բազմապիսի զուգակցումների. «զի ի շորից նիւթից ասի գոյացեալ»: Չորս տարրերի ուսմունքով են պայմանավորված նաև Հովասափ Սեբաստացու սաղմնաբանական պատկերացումները: Արական սկզբին վերագրելով երկու տարրերի (հուր և օդ) հատկանիշները, իսկ իգական սկզբին՝ մյուս երկու տարրերի (ջուր և հող) որակական հատկանիշները, Հովասափը պտղի սաղմնավորումը պայմանավորում է արգանդում այդ շորս տարրերի միացումով:

Սաղմնաբանական այդ պատկերացումները, անկասկած, իրենց հիմքում ունեն սաղմի առաջացման վերաբերյալ Հիպոկրատ-էպիկուրյան տեսությունը, ըստ որի բեղմնավորումը տեղի է ունենում, երբ արգանդում միանում են արական և իգական սեռական բջիջները՝ ի տարրերություն արիստոտելյան այն տեսակետի, ըստ որի սաղմը արգանդում գոյանում է միայն արական սկզբի (բջիջի) միջոցով, երբ արական սեռական բջիջն ընկնում է կնոջ դաշտանային արյան միջավայրը:

Ընդհանրապես ոչ միայն Հովասափի, այլև միջնադարյան հայ բնագետների մեծ մասի՝ սաղմի ֆիզիոլոգիայի վերաբերյալ պատկերացումները հենված են Հիպոկրատ-էպիկուրյան տեսության վրա, թերևս այն պատճառով, որ հայ բնագետ-բժիշկների հիմնական կողմնորոշումը եղել է դեպի հունա-հոմեոկան դասական բժշկագիտությունը (Հիպոկրատ, Գալեն, Նեմեսիոս Եմեսացի, Գրիգոր Նյուսացի և այլք), որոնց գործերին նրանք ծանոթ էին ոչ միայն թարգմանությունների, այլև բնօրինակների միջոցով:

Չափազանց ուշագրավ են Հովասափ Սեբաստացու պատկերացումները սաղմի ներարգանդային աճի ու զարգացման ընթացքի վերաբերյալ: Ուշագրավ այն առումով, որ այս դեպքում նա կարևոր նշանակություն է տալիս ժառանգականության գործոնին. «Իսկ ստրղծու մանկանն ըստ բնութեան հօրն, գոյանայ մանուկն, թէ մաղձոտ լինի և կամ այլ ինչ աղտ ցաւոց ունենայ ըստ այնմ գոյացութեան առնու խառնուածքն. վասն այնորիկ պարտ է առն և կնոջն զժամանակն առողջութեան ընտրել. զի առողջ լիցի մանուկն, որպէս մշակ, որ ընտրեն զժամանակ սերմանելոյն, զի թէ ցամաք լինի երկիրն և կամ տղմուտ և գէճ՝ ոչ տայ պտուղ...»<sup>4</sup>:

Պտղի բնականոն աճի ու զարգացման համար ոչ պակաս նշանակություն ունի, ըստ Հովասափի, հղի կնոջ աշխատանքի բնույթն ու սննդի հիգիենան:

Սաղմի բեղմնավորման ու պտղի ներարգանդային աճի ու զարգացման վերաբերյալ այդ ոացիոնալ տեսակետների հետ միաժամանակ Հովասափի մոտ առկա են նաև, և սա ինքնին հասկանալի է, սխոլաստիկ պատկերացումներ. մասնավորապես դա վերաբերում է 12 կենդանակերպերի ու մոլորակների՝ պտղի ներարգանդային զարգացման վրա ունեցած ազդեցության մասին Հովասափի պատկերացումներին:

Սաղմնաբանությունը հետևում է բժշկարանի մարդակազմության ու բնախոսության բաժինը: Այն հիմնականում համընկնում է Ամիրզովլաֆ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գործի համապատասխան բաժիններին: Բժշկարանի այս հատվածի ուսումնասիրությունը հուշում է, որ Հովասափը, ամե-

<sup>4</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7049, էջ 96ա:

նայն հավանականությամբ, ծանոթ է եղել նաև մինչև XVI դարը հայերեն լեզվով ստեղծված այլ կազմախոսական գործերի:

Ընդհանրապես XI—XV դդ. հայ բժշկագիտության մեջ մենք հանգամանալի անդրադարձումներ ենք տեսնում անատոմիայի և ֆիզիոլոգիայի հարցերին: Ավելորդ չէ նշել, որ հայ բժշկագետների այդ անդրադարձումները իրենց հիմքում ունենալով մարդակազմության գալենյան պատկերացումները, անշուշտ, հարստացված են սեփական դիտարկումներով: Այս վերջին հանգամանքը պայմանավորված է թերևս նրանով, որ միջնադարյան Հայաստանում, ի տարբերություն միջնադարյան Եվրոպայի, պաշտոնապես թույլատրվում էր դիաճերձումներ կատարել<sup>5</sup>: Եվ պատահական չէ, որ դիցուք՝ XV դարի հայ բժշկապետ Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկախոսության կազմախոսության և բնախոսության բաժինները իրենց առավել ամբողջականությամբ, պիտական ճշգրտությամբ շահեկանորեն տարբերվում են հայերեն լեզվով մեզ հասած առաջին կազմախոսական գործերից՝ XII դ. բժիշկ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» աշխատությունից<sup>6</sup>: Սա վկայում է, որ այդ դարերում հայ բժշկագիտության մեջ կազմախոսության և բնախոսության հարցերին մեծ կարևորություն է տրվել<sup>7</sup>: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Հովասափ Սերաստացու բնագիտական երկի կազմախոսության և բնախոսության բաժինները:

Այն սկսվում է կարճառոտ առաջաբանով, որտեղ, նույնպես հումորալ տեսության տեսանկյունից, մեկնաբանվում են մարմնի նորմալ կենսական պրոցեսները:

Առաջաբանից հետո, միայն քանակական տվյալներ հաղորդելով ոսկրերի, անոթների և նյարդերի թվի մասին, հեղինակն անցնում է ներքին օրգանների կազմախոսությանն ու բնախոսությանը, որից հետո մի առանձին գլխում՝ («Վասն, որ չիշենք զն (5) սգայութիւնքն մարդոյն» վերնագրով) անդրադառնում է հինգ զգայարանների բնախոսությանը:

Ներքին օրգանների անատոմիական նկարագրությունը Հովասափը սկսում է գլխուղեղից, այն համարելով գլխավոր օրգանից՝ սրտից («որ է ինքն թագաւոր ամբողջ անձին») հետո երկրորդ կարևոր օրգանը «ըզրդն, որ վեզիր է այն թագաւորին»: Հովասափ Սերաստացուն հայտնի են ուղեղը ծածկող երկու (կարծր և փափուկ) թաղանթները, որոնց դերն է ուղեղը պահպանել արտաքին վնասներից, ընդ որում թաղանթներից առաջինը ամուր կպած է գանգոսկրին և ավելի կարծր է քան երկրորդը, իսկ երրորդ պատյանը ավելի նուրբ է ու

5 Լ. Ս. Խաչիկյան, Գիաճերձումները հին Հայաստանում (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», Երևան, 1947, № 4, էջ 70—90: նաև Գ. Հ. Գրիգորյան, Միջնադարյան Հայաստանում դիաճերձման գոյությունը հաստատող մի նոր փաստ, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, № 6, էջ 293—295:

6 Անտարակույս ղևա XI դ. Մխիթար Հերացին գրել է կազմախոսական մի աշխատանք, որը մեզ չի հասել (այդ մասին հավաստի վկայություններ կան հետագա դարերի հայերեն բժշկարաններում):

7 Մասնավորապես կազմախոսությանը առնչվող բաժիններ կան նաև XIII դ. հայ անվանի բժշկապետ Գրիգորիսի, ինչպես նաև հայերեն լեզվով անհեղինակ բազմաթիվ այլ բժշկարաններում (Մատենադարան, ձեռ. № 4268, 8382, 464, 549, 453, Երուսաղեմի մատ. № 370): Այդ մասին տե՛ս Ա. Ս. Կժոյան, Բժշկագիտությունը Հայաստանում XI—XIV դարերում, էջ 60—96:

փափուկ և անմիջապես կպած է ուղեղին: Հովասափը նկարագրում է նաև գլխուղեղի երեք փորոքները, նշելով, որ դրանք իրար հետ ամուր միացած են «պոտունի տմաղի» (խոսքը *commisura cerebri magna*-ի մասին է) միջոցով, որի մեջ իր հերթին կան «կարմիր երկնի» (պետք է հասկանալ գլխուղեղում գոյություն ունեցող զարկերակները՝ *arteria cerebri*):

Անտիկ և միջնադարյան բնագետների նման, Հովասափը գլխուղեղում տարբերում է երեք փորոքներ, որոնցից առաջինում՝ ամենամեծում տեղավորված է տեսողության կենտրոնը (այն գտնվում է ճակատային հատվածում. «ինքն հիմն է և տուն է տեսողութեան, և աշացն լուսաւորութիւնն և մթնալն ի յայն փորոքնուն է»)՝, միջին փորոքում է գտնվում խելքը և եթե ուղեղի այս հատվածը վնասվի «մարդն սահր (թուլամտություն) և սարթա (կաթված) լինի»: Երրորդ՝ ամենափոքր բաժնում կենտրոնացված է հիշողությունը, որի վնասվելուց մարդ դառնում է մոռացկոտ և «զինչ որ ունի յուշ միտքն ձգէ»:

Միջնադարյան հայ հեղինակների պատկերացումները գլխուղեղի անատոմիայի և ֆիզիոլոգիայի վերաբերյալ գրեթե նույնությամբ համընկնում են գալենյան անատոմիային ու ֆիզիոլոգիային (որը բժշկագիտության մեջ գրեթե անփոփոխ մնաց մինչև XVII դ.):

Հովասափի ձևակերպումները թերևս վերահիշյալի կրկնություններն են:

Գլխուղեղի նկարագրությունից հետո մեր հեղինակը անցնում է օրգանիզմի ամենակենսական օրգանի՝ սրտի կազմախոսությունը, այն համարելով մարմնի կենսունակության և ջերմության աղբյուր: Միջնադարյան հայերեն բժշկարաններում տեղ գտած սրտի կազմախոսության նկարագրությունները գալիս են հավաստելու վերահիշյալ պնդումը, որ միջնադարյան Հայաստանում անատոմիական գիտությունն անշուշտ զարգացում է ապրել, հենց հիմնականում պայմանավորվելով դիահերձման դիտարկումներով: Այսպես, եթե Գալենը «Մարդկային մարմնի անդամների դերի մասին» աշխատության մեջ գրտնում է, որ սիրտը բաժանվում է երկու կեսի և տեղադրված է կրծքավանդակի կենտրոնում<sup>8</sup>, ապա ըստ միջնադարի հայ բնագետների, այդ թվում և Հովասափ Սերաստացու՝ սրտի տեղագրական անատոմիայի, այն գտնվում է կրծքավանդակի ստորին ձախ կեսում և բաժանվում է շորս կեսերի. երկու փորի և երկու ականջի (խոսքը, ամենայն հավանականությամբ, սրտի աջ և ձախ փորոքների ու նախասրտերի մասին է):

Բացի այդ, ի տարբերություն գալենյան մարդակազմության, որտեղ սիրտը նկարագրվում է որպես ոչ մկանային օրգան (այդ իրողությունը բացատրելով բարձրագույն նպատակարանական թելեոլոգիական սկզբունքով), Հովասափ Սերաստացին սիրտը ներկայացնում է որպես մկանային մի օրգան, որը տեղադրված է հատուկ պարկի մեջ (խոսքը սրտակրանքի՝ *pericardium*-ի մասին է), որ շվնասվի. «Եւ ինքն ամուր միս է և յայնմ յամանի մէջ է ամուր, որ պահէ զինքն յամէն շարէ»<sup>10</sup>:

<sup>8</sup> Մատենադարան, ձև. N 7049, էջ 100ա:

<sup>9</sup> «Սիրտը գտնվում է կրծքի խոռոչի կենտրոնում, շրջափակված թորով, որի բլթերը գրկում են սիրտը, ինչպես մատները»: (К. Гален, О назначении частей человеческого тела, перевод с древнегреч. проф. Кондратьева, под ред. Терновского В. Н., М., 1971, с. 227).

<sup>10</sup> Մատենադարան, ձև. N 7049, էջ 100բ:

Հովասափը խոսում է նաև սրտակրանքի մեջ առկա շճային հեղուկի մասին, որը գյուրացնում է սրտի աշխատանքը. «Եւ հանց զէտ փրփուր իրք ունի մէջն և սիրտն այն կու դաշի»<sup>11</sup>:

Բժշկարանի «Վասն քստրղծման լերդին» գլխում հեղինակը համեմատաբար սեղմ ներկայացնում է լյարդի կազմախոսութիւնն ու բնախոսութիւնը: Այս օրգանի նորմալ անատոմիական տեղադրութիւնն, ըստ Հովասափի, կրճազանդակի աջ կեսն է և նրանից կախված է լեղապարկը այնպես. «որպէս որ մէկ մի զթուրինճն (նարինջ) ի ձեռքն բռնէ և լեղին այլ ի լերդին երեսն ի վայր կախէ»<sup>12</sup>: Լյարդի դերը օրգանիզմում մեկնաբանելով հումորալ պաթոլոգիայի տեսանկյունից, Հովասափը նրան վերագրում է կերակրանյութերից արյունաստեղծման և արյունը օրգանիզմի տարրեր մասերը անհրաժեշտ քանակութեամբ տեղաբաշխելու դերը. «Եւ կերակուր և բմպելի, որ մէջն ի ստամոքին կիսաեփ լինի և լերդին երակնին զուծն ի յինքն քաշեն և լերդն արին դարձուցանէ և զայն արինն բաժանէ յանձն, որ պէտ անէ իր»<sup>13</sup>:

Հովասափը գտնում է, որ լեղի արտադրող այս օրգանը ունի երկու բերան, որոնցից մեկով լեղին լյարդից իրեն է քաշում (հավանաբար՝ ductus hepaticus-ն է), իսկ մյուսով լեղին լեղապարկից գնում է դեպի ստամոքս (խոսքը, ամենայն հավանականութեամբ, ductus cysticus-ի մասին է): Հիմք ընդունելով հումորալ պաթոլոգիայի տեսակետը, Հովասափը գտնում է, որ լեղապարկի ֆիզիոլոգիական դերն օրգանիզմում կերակրանյութերի մարսման պրոցեսին մասնակցելն ու արյան մաքրումն է:

«Վասն ստեղծման փածղանքն» գլխում, Հովասափ Սերատացին ճշգրտորեն նկարագրում է փայծաղի տեղագրական անատոմիան: Ընդհանրապես փայծաղի անատոմիական նկարագրութիւնը տրված է շատ հակիրճ, նշվում են միայն այն երկու երակները, որ փայծաղից դեպի ստամոքս են գնում (խոսքը հավանաբար փայծաղային երակի և զարկերակի մասին է, որոնք անցնում են ստամոքսի հետին մասով):

Ինչ վերաբերում է փայծաղի՝ օրգանիզմում ունեցած դերին ու նշանակութեանը, ապա Հովասափը կրկին հիմք ընդունելով հումորալ պաթոլոգիայի թեզը, գտնում է, որ փայծաղը ստեղծված է արյունը մաքրելու և առհասարակ մարմնի մեջ առաջացած «ամէն աղբ» իր մեջ կուտակելու համար, այլ կերպ ասած՝ կատարում է գտիշի դեր:

Փայծաղի այդօրինակ ֆիզիոլոգիական դերն, ըստ Գալենի, օրգանիզմում իրագործվում է նրա սպունգանման կառուցվածքի շնորհիվ<sup>14</sup>: Նույն տեսակետին է նաև Հովասափը, ըստ որի փայծաղը իր ֆիզիոլոգիական գտող դերն իրականացնում է այն բանի շնորհիվ, որ այն ցանցառ (ասել է սպունգանման) մարմին է:

«Վասն ստեղծման թոքին» գլխում գրեթե շանդրադառնալով թոքի անա-

11 Տե՛ս նույն տեղում:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 101բ:

13 Նույն տեղում:

14 «Այժմ մենք կտեսնենք այն ամենը, որ վերաբերում է փայծաղի կառուցվածքին և առաջին հերթին նրա նյութին, որին ումանք անվանում են պարիենիմա, և որի շնորհիվ փայծաղը ձեռք է բերում լեղին իր մեջ ներծծելու հատկութիւնը: Այդ նյութը ստեղծված է բավական ցանցառ, ինչպես սպունգ, որպեսզի հեշտութեամբ կլանի այդ թանձր հյութերը» (Գալեն, c. 185).

տոմիական կառուցվածքին, Հովասափը անցնում է շնչական այդ օրգանի ֆիզիոլոգիական դերի նկարագրությանը:

Հովասափի մեկնությունը այն պայմանավորված է թոքի կառուցվածքով և իրազործվում է իրար հակառակ այն երկու շարժումների (հեթեթեթ) շնորհիվ, որ արաբական բժշկության մեջ անվանվում է «հեթեթեթի ինպիսաթ»՝ ներշնչման փուլը (արաբ. انقباض) ընդարձակվել, լայնանալ արմատից) և «հեթեթեթի նդպագ»՝ արտաշնչման փուլը (արաբ. — انبساط — կծկում արմատից):

Ի տարբերություն մարտոդական տրակտի այլ օրգանների (լյարդի, փայծաղի, լեղապարկի), Հովասափ Սերաստացին բավական հանգամանորեն և ճշտորեն ներկայացնում է ստամոքսի տեղագրական անատոմիան (կրծքավանդակից ներքև, վերին հատվածը թերված դեպի ձախ, իսկ վարինը՝ դեպի աջ):

Ի դեպ, հարկ է նշել, որ նա, քաղցի ֆիզիոլոգիայի մեջ առանձնացնում է ստամոքսի pyloric հատվածի նշանակությունը. «Նւ ինքն կոհար է փուճ փուճ, անոր համար է, որ այլ տեղաց ուժ առնու կերակուր ուտելու համար և խիստ ուժ ստամոքին բերանն է և այս է զօրութիւն, որ քաղցեցնէ զմարդն»<sup>15</sup>: Այստեղ կրկին առկա է առնչումը գալենյան կենսաբանությանը:

Այնուհետև Հովասափը անդրադառնում է ստամոքսի քարշողական, բռնողական, եփողական և վանողական գործողություններին: Նշենք նաև, որ Հովասափ Սերաստացուն հայտնի է եղել ստամոքսապատի անատոմիական կառուցվածքը՝ նրա երեք հյուսվածաբանական շերտերը (շճաթաղանթային, լորձաթաղանթային և մկանային):

Հովասափի՝ աղիների դասակարգումը համարյա նույնությամբ կրկնումն է գալենյան դասակարգման, այսուհանդերձ բարակ և հաստ աղիների բոլոր հատվածների արաբական անվանումները գալիս են ասելու, որ ինչպես միջնադարյան հայ բժիշկներից շատերի, այնպես էլ Հովասափի համար այդ հարցում սկզբնաղբյուր է հանդիսացել արաբական բժշկագիտությունը (մասնավորապես Իբն Սինայի «Կանոնը»):

Միզասեռական օրգանների կազմախոսությունն ու բնախոսությունը բժշկարանում ներկայացված է բավական սեղմ: Երիկամների ու միզապարկի տեղագրական անատոմիան և ֆիզիոլոգիան, Հովասափը ներկայացրել է ըստ Ամիրդովլաթի, որի համար էլ հիմք են հանդիսացել Իբն Սինայի «Կանոնի» համապատասխան բաժինները<sup>16</sup>: Հարկ է նշել, որ միջնադարյան հայ բժիշկները բավական իրական պատկերացում են ունեցել երիկամների կառուցվածքի՝ նրա ավազանի (pelvis renalis), պարիենխիմալի, երիկամային զարկերակի և երակի (arteria et vena renalis), ինչպես նաև երիկամներում ու միզապարկում քարագոյացման ախտածագման մասին:

Բժշկարանի կազմախոսության բաժինը ավարտվում է զգայարանների կազմախոսությանն ու ֆիզիոլոգիային նվիրված բավական ընդարձակ հատվածով:

<sup>15</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7049, էջ 105ա:

<sup>16</sup> Այդ համոզմանը մենք եկանք, երբ համեմատեցինք Իբն Սինայի «Կանոնի» և Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» գործի «Կերպ ստեղծման երիկամացն» և «Կերպ ստեղծման հարբշտին» գլուխները (Տե՛ս, Абу Али Ибн Сина, Канон врачебной науки, с. 269, և Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, էջ 34, 37):

Ուշագրավ է Հովասափի հետևությունը, որ մարդու կատարելությունը պայմանավորված է հինգ զգայարաններով, որոնք ֆիզիոլոգիապես կապված են միմյանց:

Զգայարանների բնախոսությանը նվիրված բաժնով ավարտվում է բժշկարանը: Սրանք են հիմնականում Հովասափ Սերաստացու բժշկագիտական բնկալումները:

Հովասափ Սերաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» ստեղծագործության բնությունը մեզ համոզում է, որ հայ բնագետի բժշկական հայացքները հիմնված են անտիկ բնափիլիսոփայության, արիստոտելյան փիլիսոփայության ու գիտության, ինչպես և հայ բժշկական դպրոցի լավագույն ներկայացուցիչների հայացքների վրա. Պլատոն և Արիստոտել, Հիպոկրատ և Գալեն, Նեմեսիոս և Նյուսացի, Եգնիկ Կողբացի և Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի ու Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Հերացի և Ամիրդովլաթ Ամասիացի. ահա այն խոշոր իմաստասեր գիտնականները, որոնց գրքավածքների (թեկուզ և շատերից միջնորդաբար) ստեղծագործական յուրացմամբ նա ստեղծել է իր արժեքավոր բժշկագիտական գործը:

\* \* \*

Հրատարակվող բնագրի համար հիմք է ծառայել Մաշտոցի անվան Մատենադարանի № 7049 (XVII դ.) բժշկարանը: Բայց միաժամանակ ձեռքի տակ ունեցել ենք Զմմառի վանքի № 212 գրչագրի մանրածապավենը, որի առանձին հատվածները միայն, խիստ անհրաժեշտության թելադրանքով, համեմատել ենք հրատարակվող գրչագիր օրինակի հետ:

Տողատակի ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով ընդհանրապես չենք արտացոլել քերականական (կետադրական, շարահյուսական), ինչպես նաև երկրորդական ուղղագրական բնույթի տարբերությունները:

#### ԲԺՇԿԱՐԱՆ № 7049<sup>17</sup>

Փամանակ՝ Ժէ դ.: Թերթ՝ 270: Թուղթ: 14×19,5: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 17—23: Կազմ՝ կտղ: Աստա՝ դրոշմադարդ կտավ: Հշտկրճ հետագայի՝ 2ա (1842 թ.), 4բ (1845 թ.), 87բ (1849 թ.):

Բվնդ. Աբուսայիդայ Յաղագոս կաղմութեան մարդոյ (1ա—40ա):

Վասն բնութեան մարդոյ՝ ի շորից գոյացեալ (40բ—63ա):

Յովհաննիսի հերիմի Վասն երակաց և արին առնելոյ (63բ—70ա):

Դեղագիրք (70բ—86բ):

Յովասափայ Սերաստացույ Բժշկարան ընտրեալ տարրական մախցի (87ա—114բ):

Ամիրդովլաթի Ամասիացույ Ուսումն բժշկութեան (115ա—158ա):

Դեղագիրք (158բ—193բ):

Բժշկարան հաւաքեալ հրամանաւ թագաւորին Յովհաննիսի (193բ—270ա):

17 «Տուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ, Երևան, 1970, էջ 450.



## ԲԺՇԿԱՐԱՆ ԸՆՏՐԵԱԿԱԿԱՆ ՍԱՐՐԱԿԱՆ ՄԱԽՅԻ

- 87ա Առաջին՝ դեղոց ժողովելույ զատենն և զժամանակն և թէ որպէս պահել պարտ է; որ ուժն շանցանի: Երկրորդ դուռն մարդակազմութիւն ցուցանէ. զանդամն, զօղվածն զըղեղն և զչրհեղն և զամեն երակսն և զցաւոց շարժմունքն սկսեալ ի տարերաց ըստեղծմանէն մինչև բոլոր մարմնոյն ԺԳ (13) փոխնշան կերպարանացն: Երրորդ դուռն վասն հիւանդին նշաննուն և երակին և կարուրային և վնաս դեղերոց զոր պարտ է բժիշկն ուսանիլ և գիտանալ և Գ (4) բաժին այն է՝ զմարդոյն կազմն և դեղն և Դ (4) մախցին և ժամանակին և եղանակին || և Դ (4) տարերց բնութեան:

[Ա.]յսպէս՝ զստածումն ամենայն դեղոց, զոր ցուցանէ զամեն ցեղ ցաւոց զինչ որ յարարածս լինի, գրած կայ այրէն մինչև ի քէն: Որպէս ի յայրէն կայ գրած աշաց, ակընջի, օձիկի, բենին վերա՝ բերան ցաւի, բորի, բաւասիրի և այլն, զիմի՝ զլիսացաւի, զիրութեան, զոզարգիլի, զոզի, և ի թօն՝ թերբիպն և ի թրիաբերն, կարաւ զինչ դեղ որ առաջի գիրն է, այն բանին վերայ, լիւնին<sup>18</sup> վասն լուծման, մենին վերայ՝ մաճունին ամէն ցաւոց, մինչև ի քէն՝ քէջի, քերի և քարի և այլն, ի Ֆեն՝ ֆոանկ ցաւի, ֆոանկ բորի և ֆլոնիայի և այլն: Ե (5) դուռն առանձին մեծամեծ և անպիտան դեղոց պատմութիւն պիտանի ցանկով<sup>19</sup>:

- 88ա [Ա.]ւրհնեալ է բարերար և ողորմածն Աստուած յորժամ ըստեղծ զմարդն առաջին, քանի որ ի դրախտին եկաց ոչ ցաւ ի մարմնի կայր և ոչ հիւանդութիւն ի հոգի: Յորժամ անցաւ զպատուէրն ապայ ամէն ցաւ և հիւանդութիւն տիրացօ տարերաց հակառակութեամբն զի ի մէջ տարերաց եմուտ աշխարհս: Նայ արարչայդործն Աստուած ամէն ծաղիկ և խոտոյ շնորհք մի ետուր և հոգովն սրբով իմացուց յառաջին իմաստասիրացն զամէն ցաւոց զդեղն, որ անուամբն Աստուծոյ գտանէ զառողջութիւն: Բայց մեք՝ անպիտան ծառայս ձեր մեղայապարտ Յովասափ անուն սարկաւագ || Սերաստացի կամեցայ զ[ը]նտիրն հաւաքել և բացայայտել փոքր ի շատէ ի գրոց իմաստասիրականաց և բժշկական զամէն ցեղ ցաւոց ըստացումն, զեփելն, զտրորելն զամէն դեղոց և խնամածել ցաւածին: Եւ նայ որ ըստեղծաւոն է տայ զառողջութիւն և նմայ փառք և պատիւ յաւէտ և յաւիտեանս անբասպառ յաւիտենից ամէն:

- 88բ Զառաջն գրեմք զեղանակ դեղոց հաւաքելոյն: Եւ գիտացիր եղբայր որ զինչ յաշխարհս դեղ կայ Գ (3) ցեղ են. կամ խոտ է, որ ի գետնէն բուսանին, և կամ քարինք են, որ ի մատանէ ելանեն, և կամ անասնոց զաւղվածք են: Եւ թէ կամենաս խոտի հունդ ժողովել վասն դեղոց որպէս 89ա քարաֆիան, քամունն և անխոնն || և որ նման է սոցայ այն ատենն պիտի, որ հասըլ լինի և գիճութիւն ի մէջն շմնայ: Եւ թէ տաք է որպէս ակըրրդարհան և ճնտիանան և պահմանն և որ նման է սոցայ այնժամ պիտի ժողվել, որ շորանայ և ըսկսանի տերեն թափիլ: Եւ թէ ծաղկունք են՝ որպէս մանուշակն և նոճէղն և զամպախն և որ նման է սոցա, յայն

18 Բնագրում՝ լիւնին:

19 Այս հատվածը բացակայում է Զմմառի վանքի մատենադարանի № 212 ձեռագրից (այսուհետև Չեռ. № 212):

ատենն պիտի ժողովել, որ լման հասնի և բացուի և շփոխի գոյնն և թէ որձայ կամենաս առնել, որպէս ըստխաւտօսն և զարնապն և հաշան և որ նման է սոցայ, լման հասածէ լինի և շփոխի գունն: Եւ այն խոտն, որ ամէն բան կու մտնէ, որպէս զանդարիոնն և զայսիումն՝ այն ատէնն պիտի, որ ըսկանու հունտ կապել: || Այլ և աւղն իստակ և պարզ պիտի լինի: Եւ գիտացիր, որ այն, որ վայրի<sup>20</sup> բոյս է, յուծով է քան գածուոցն<sup>21</sup>: Եւ այս դեղերս, որ խոտ է ուծն մինչև Գ (3) տարին և Ե (5)՝ կու վատուծի: Եւ թէ խէժ կամենաս ժողովել որպէս Ֆարֆիոնն և աւշախն և ճաւշիրն, և թէ տակի կեղևն որպէս շէտարաճն և սալիխան և մահի գահրաճն յայնժամն առ, որ դեռ որձայ չէ հաներ: Եւ թէ յավսարա առնէս որ է քամուքն որ է կաթն որպէս աղաղիան<sup>22</sup> և աֆիան և որ նման է սոցայ յայնժամ առ, որ չինքն դեռ ջուր կենայ, որ ուծն յուշ երթայ և շատ դիմանայ: Երբ այս քամուքնիս ըսկանու ի վատուծիլ, շուտ ի բան տար, որ ուծն շերթայ: || Եւ թէ այն դեղերուն լինի, որ անասնոց գաւթվածք է կամ եղջիր, կամ լեղի, կամ լերդ և այլ պատեհ է, որ ի մատղաշ կենդանիս առնես ի գարնանաին եղանակն և առողջ անասնոց մորթեն և ապա առնեն:

Եւ այն որ քարինք են, որ է մատէն, որպէս զալղանդարն և զոնխրն և այլն: Լան այն է քարերուն, որ կու բանուի և յիստակ լինի և աղէկ և մէջն հող և քար շրկենայ և գոյնն փոխած շրլինի. այսպէս ընտրես զամէնայն:

Այլ և դեղերուն պահելն Ե (5) ցեղ են: Առաջն այն է, որ ժողովեն և զուրս շինես և պահես որպես տարչինն: Երկուս այն է, որ խառնես զայն դեղն ի յայն, որ զուծն կու պահէ խասլիաթով, որպէս Ֆարֆիոն պահեն քարով, որ կեղևն հանած լինի, || զքաֆուրն պղպեղով, բաղլաով: Երեք այն է, որ զմուշկն և զամպէրն և զքաֆուրն որ և նման է սոցայ՝ հանց աման պիտի, որ բերանըն նեղ լինի, որ բռնեն մոմով: Եւ մուշկին լաւ պահելն այն է, որ զինքն արճիճէ աման դնեն և կամ ապիկի կամ ի տպպա: Կայ այլ դեղեր, որ ի պտուկ դնեն, որպես տերևաան և այլ հնտերք, որ ի տ[պ]պայի մէջ կու դնեն, որպես քարուպարն: Եւ զոր ի տօպրակ կու դնեն, որ ի քթանէ լինի, որպէս աղախիան և քամուքնին: Եւ դեղերուն պահելն հանց տեղ պիտի դնել, որ ոչ հով լինի և ոչ գէճ, ոչ տաք լինի և ոչ շոր, ի մէկխոտ կամ ի դիշահոտ տեղ շրլինի: Երրորդ այն է, որ զսուր դեղերն և զվատուծն ի մէկ տեղ շրպիտի պահել, որ ի մէկ մէկէ<sup>23</sup> հոտ շառնու և փոխվին ի բնութենէ, որպէս մանուշակն || և նունայֆարն և որ նման է սոցայ:

Ապայ այսուհետև գրեմք զմարդակազմութիւնքն, որպէս հրամացին բժշկական վարդապետքն իմանալ զբնութիւն մարդոյն զանդամն և զօրուածքն, զսիրտն ու զդեղն, զարիւնն և զջղերն, զոսկորն և զցաւոց շարժմունքն: Բժշկացն խնամ տանելն մարմնոց, առ ի պէտս առողջութեան, զի ի ձեռն խոստովանութեան լինի բժշկութիւն հոգոց, այսպէս

20 Բնագրում՝ վայրի է:  
 21 Բնագրում՝ զայծուոցն:  
 22 Բնագրում՝ աղալղիան:  
 23 Բնագրում՝ ի ա ա է:

և մարմնոց ի ձեռն դեղոց՝ որպէս մարգարէն ասէ, թէ «որ ոչ իցէ առողջ մարմնով, ոչ կարէ ծառայել Աստուծոյ հոգւով»:

Յաղագս բնութեան մարդկան, թէ որպէս արարչագործեցան յարարչէն իւրեանց, վասն զի ի շորից ՝ նիւթից ասի գոյացեալ մարդ՝ հող և ջուր և հով և հուր: Իսկ Բ (2) տարեից տարողք են հուր և օդ՝ այրական և Բ (2) կրողք են ջուր և երկիր՝ իգական, զի շրոյ խոնաւութիւն առանց շերմութեան ամուլ է, իսկ ընդ միմեանս խառնարբեալ պտղաբերեն:

Հուրն մշտաշոր է ըստ տագուն, ըստ ցասմանն և սրտմտականն: Եւ ջուրն ցանկական է և գիճին և արտասուին: Քամին զրուց և թեթևութիւն տուր և առ շնչին շարժուն: Հողն ծանար և կրող ամենայնի, որ Աբրահամ ասէր՝ «ես հող եմ և մոխիր»:

Հարց՝ Վա՞սն էր մարդ ի հողոյ ասէ ստեղծ և աստ հող և ջուր, հով և հուր:

Պատասխանի՝ մարդ ի հողոյ արար Աստուած ըստ շրոյն շաղվեաց, որպէս ասէ: «էառ հող ՝ ի Սիոնէ և արար կաւ և Ադամ, զի Ադամ կաւ թարքմանի և փշեաց ի նա շունչ կենդանութեան և ետ նմա հոգի անմահ, որ է հուր և լոյս, զի ի մեռանել մարդուն քամին և կրակն ելանէ և մնա հող և ջուր անշունչ և անհոգի»:

Հարց՝ զի՞ արդ ետոյ ըստրդծ Աստուած զԱդամն տէր և թագաւոր ամենայնի մինչև իւր քան զիմաստուն պատկերն ի նմայ:

Պատասխանի՝ Աստուած արար զԱդամ բայց ի հողոյն, վասն այն ստեղծ զի ամօթ լինի հպարտն: Յաւրինեաց ըզգրախտն գահոյք թագաւորի, այլ և զանասունսն սպասաւոր ծառայ և տունկ ի բոյս վայելչական և ակունք անգինս և երկու շահս ցորեկոյ և գիշերոյ և զայն երգոց պարուց թռչնոց ճիւղողականս, որպէս որ զթագաւորի պատիւ նախ ՝ զպէտս պատրաստէ և ասպա կոչէ որպէս ասէ մարգարէն: «Մարդ ի պատի էր և ոչ իմացաւ հաւասարեաց անասնոց՝ ասպա գիտացաւ»: Եւ տասներկուսն պարգևօք զարդարեալ էր ի լոյս անեղութեան պարուրեալ էր անճառելի:

Զի արեգակն ի նոյն լուսոյն մասն ինչէ տեսութեամբն Աստուծոյ զուարճախօսիլն ընդ ըստեղծօղն անմահ, անյաղթ կեանք անծերանելի, հասակն վայելչութիւն անաշխատ փափկութեան, քահանայութիւն և թագաւորութիւն ի վերայ ամէնայն ձեռակերտաց: Զայս տասներկու պարգևքս զրկեաց ի մէնչ սատանայ՝ ասելով յորժամ ուտիցէք ի ծառոյն յայնժամ ճանաչէք զբարի և զչար: Իսկ ամենողորմ և ծածկագէտն Աստուած, որ ի սկիսքն ըստրդծմանէ գիտէր զպատրանօք խաբիլն յորմէ

93ա ասէր: ՝ «Որդին Աստուած մարմնանալով զարձուցանեմ զնայ»:

Հարց՝ զի՞նչ է ասելն ոտնաձայն կամ գալուն ի դրախտն:

Պատասխանի՝ վասն ողորմած կամացն էր այն, զի մեղայ ասիցեն և ոտք անկանիցեն: Յայնժամ ասէ Ադամ, կինս այս՝ զոր ետուր ինձ սայ խաբեաց զիս, և կինն զօձն պատճառեց:

Հարց՝ Վա՞սն էր զամէնայն կենդանի յառաջ քան զԱդամ ստրղծեաց և զկինն յետո ի կողէն:

Պատասխանի՝ վասն զի Ադամ մի հպարտացի թէ և ես անեղ եմ

այլ եղական որպէս զկին: Եւայ զոր կտես իւրմէ ստրղծեալ, բայց ոչ կարաց ասել մեղայ, զի կապեաց զնա սատանայ, և զի փորձ ոչ կայր ի դրախտն և ոչ զհտէր յորժամ կամու յաշխարհի մէջ տարերացս ըմբռնեցին տարերքն զնայ և ամէն տարերք յինքն քարշելով յաւելուլ և պակասիլ ցեղ ու ցեղ ցաւ և նեղութիւն եղև ի մարդն: Ըստ այնմ գազանք և անասունք թշնամիք դարձան միմեանց այնմհետէ և գիտաց Ազամ ճանաչեաց զբարի և զչար, զգեցաւ թղենի և յետոյ մաշկեղէն, որ ետ հրեշտակն որ մորթ կենդանեաց, վասն առակութեան, վասն մեռելութեան և վասն ընկնելոյ ի ծառայութիւն և աշխատանօք գործել զերկիր: Եւ վասն մարդայկազմութեան հետէ գամք, թէ վասն է՞ր զգլուխն բարձր և դէմքն լուսաւորօքն:

Հարց՝ մարդն նմա՞ն է ամենայն աշխարհի՞ գլուխն երկնից օրինակ, բարձր և հով, և հուր, և լուսօտրքն՝ օրինակ արեգակն և լուսինն, և երկիր, և ջուր և հող, երկակաց շարժմունք: Այլ նման է մարդ աշխարհի զի իմանալի ըստ հրեշտակաց և սգալի ըստ անասնոց, մարմնովն աճէ ըստ տնկոց, գոյանայ ըստ անշնչից, զի աշխարհ որբան է ի բեռնէ հիւսիսոյ՝ ի բեռնէ հարաւոյ, նոյնքան է յարեւելից մինչև յարեմուտս: Այսպէս՝ մարդոյ մարմինն ի գազաթէ գլխոյն մինչև ի ներբանքս ոտիցն որբան է՝ նոյնքան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատոց ձեռաց: Այլ և ոսկերքն նման են քարանց և մարմինն նման է հողո, երակ արեանն գետոց և աղբերացն, մազն բուսոց և տնկոց, և շունչն հողմոց, բոլոր գլուխն երկնից, աչքն երկու լուսաւորաց, է (7) ծակ գլուխն՝ է (7) լուսաւորաց մոլորականացն, երկոտասան<sup>24</sup> անդամքն՝ երկոտասան կենդանայկերպացն և երկոտասան մասին աշխարհի:

94բ ՎԱՍՆ ՍԵՐՄԵԼՈՅ

Ասացին իմաստունքն Հոմերիոս, Վերգիլոս, Պղատոն և Գալիանոս, և Արիստոտել և այլ որք մտաքինսն՝ և որ ի միջոյ, եթէ գործարանքն սերմանն երկու երակս է, որ ի գլուխն ելանէ և իջանէ՝ մինն լի արեամբ և մինն լի փքով և յորժամ հասանի երակ արեանն ի յարանսն՝ նայ արիւնն ի սերմն դառնայ, որպէս ըստինս կանանց ի կաթն դառնայ: Արդ իմա ծնուլն սերմանն ընդ կնոջ յարգանտն լինի արիւն ի 9 (6) օրն և ապա ծնանի որթն որպէս ասէ Դաւիթ՝ «ես որդն եմ և ոչ եմ մարդ», ի 10 (40) օրն, ապա կատարին անդամքն և առնու հոգի Աստուծոյ, որ ինքն միայն գիտէ, որ ըստրղծ զնայ:

Էգ մանուկն 9 (80) օրն կատարի և առնու հոգի, զի արու մանուկն յաջոյ կողմանէն են և լերդն ընդ կողմն է տաք, զի զիւրեաւ աճի մանուկն որպէս ընդ դէմ արևու և շող տեղի զիւրեաւ աճին բոյսքն: Իսկ ստրղծու մանկանն ըստ բնութեան հօրն գոյանայ մանուկն, թէ մաղձոտ լինի և կամ այլ ինչ աղտ ցաւոց ունենայ, ըստ այնմ գոյացութեան առնու խառնուածքն: Վասն այնորիկ պարտ է առն և կնոջն

24 Բնագրում՝ ԲԺ:

95բ զժամանակն առողջութեան ընտրել, զի առողջ լինի մանուկն որպէս  
 մշակ, որ ընտրեն զժամանակ սերմանելոյն, զի թէ ցամաք լինի երկիրն  
 և կամ տղմուտ և դէճ ոչ տայ պտուղ այլ յորժամ տնկի մանուկն յորո-  
 վայն մարն՝ պորտն առնու զկերակուրն՝ որպէս սեխ և դդում: Վասն  
 որոյ պարտ է կնոջն մինչ մանուկն յարգանտին կայ || ի վնաս կերակ-  
 րոց պատրաստ կենալ, ի դիժար բանէ, զի մատաղ մանուկն որպէս  
 մատղաշ տունկ է, դիւրեաւ սղալի ի ցրտոյ կամ ի տօթոյ, կամ անհալ  
 կերակրոց և դիպուածոյ և ի լուծման դեղ տալոյ և տաք և շոր լինի:

Իսկ ըստեղծման՝ նախ սիրտն գոյանայ և ի վաղճանելն յետոյ մե-  
 ոանի: Մանուկն ի յորովայն մօրն ի կանգուն, կայ և ի ծնանելն ապա  
 գլխի վայր դառնայ, որ նշանակէ զանկումն մարդոյն: Իսկ աւազանի  
 գլխի վեր մկրտիմք և վերստին կանգնիլ դարձեալ ի Քրիստոս նշանա-  
 կիմք:

### ՎԱՍՆ ԾՆԸՆԴԵԱՆ

Արդ ծնանի մանուկն Ք (9) ամիսն և է (7) ամիսն և այսորիկ այ-  
 96ա րին և առողջ լինին: Իսկ Ը (8) ամիսն ոչ ապրի, զի Ք (9) թին || խոր-  
 հրրգական է: Յառաջի ամիսն Զօհալին բնութեամբն և իշխանութեամ-  
 բրն է, հով է և շոր, զոր գիճութիւնն շորցնէ: Բ (2) ամիսն Մուշթարին է,  
 տաք է և գէճ, զայն գիճութիւն յարին զարձնէ: Գ (3) ամիսն Մառխն  
 է, զարինն զօգուածն կատարէ: Դ (4) ամիսն Արեգակն է, զաւղուածն  
 և զշղերն ամրացնէ և շնչաւոր առնէ: Ե (5) ամիսն Զաւհրան է, զաչքն և  
 զղեղն շինէ: Զ (6) ամիսն Օտարիտն է, պնտէ և զոսկերն շինէ: Է (7)  
 ամիսն Լուսին է, զուտելեաց տեղն և զստամորսն շինէ: Թ է (7) ամ-  
 սոյ ծնանի տղան, նա ապրի, զի է (7) աստղի հայեցքն լման կա ի նմայ:  
 Իսկ Ը (8) ամիսն կրկին հով և շոր, թէ ծնի՝ չապրի, զի Ը (8) տունն մա-  
 96բ հուտուն ասացին իմաստասէրքն: Իսկ Ք (9) || ամիսն Մուշթարին է,  
 կենաց տուն թէ ծնի տղան ապրի: Իսկ յորժամ ընծայի տղան, դու հա-  
 շուէ զկենդանակերպքն թարպեխ և տես թէ լուսինն յինչ կերպ է և գէպի  
 յետ համարեայ ՄՀԳ (273) օր և դիտացիր թէ լուսինն որ կենդանակեր-  
 պի էր և դիտենաս զբարին և զչարն, պուրճն և տալէհայն: Եւ Արիստո-  
 տէլ ասաց, թէ ստրղծ Աստուած մարդն, որպէս քաղաք մի, որ լինի  
 երկոտասան դռնէն, որ հանապաղ ելանեն տոյգորք դեղերն, որ անձին  
 օկտութիւն [ունի] Բ (2) վտակ մեծ, Բ (2) դիմացն ըստեղծ և ամէն  
 վտակ ՃՄ (150) և կայ որ անդամքն իւրմէն նիւթ առնու: ՄԽԸ (248)  
 շնչերակ կայ ի մարմինն, զօգուածքն ՄԽԸ (248) ոսկոր է, Ի է (27)  
 լուծք ջիւք են, ՅԿԵ (365) անդամք են, ՅԿ (360) երակն ի շարժման կայ,  
 97ա որ միսն իւրմէն բուսանի և ժԲ (12) դուռն զոր || յիշեցար. Բ (2) աչքն,  
 Բ (2) հոտոտելիքն է, Բ (2) ականջն է և Բ (2) ծիծքն են, Ա (1) բերան  
 է, Ա (1) պորտն է, Ա (1) առաջի դիհն է, Ա (1) վերջինն: Եւ Ե (5)  
 սգայարանքն և այս ևս ունի ըստ նըմանութիւն Դ (4) տարերացն, զի  
 շօշափելիքն հողոյ օրինակ են և ճաշակելիքն ջրոյ, որ ի վեր է բան  
 զհող: Լսելիքն և հոտոտելիքն է քամոյ և տեսանելիքն հրոյ օրինակ է:  
 ՇՀ (570) կաթ արին է մարդս և ամէն կաթ Ա (1) մսղալ է և տանուտէրն

խոյն է: 34 (360) շնդ արօ զմարդն և տանուտէր զԼուսինն եղիր: Մարդուն մորթին տաք է և շոր և տանուտէրն Արեգակն է: Եւ ասոր ամէնուն ղեղ օրինեաց Աստուած, որ անուանէն Աստուծոյ լինի բժշկութիւն, զի Աստուծոյ անունն հազար ու մեկ է<sup>25</sup> և ղեղերուն խոտերուն՝ հազար ու մեկ է:

97բ || Գարձեալ Դ (4) տարերաց՝ կրակ, քամի, ջուր և հող և Դ (4) հողմն ի աշխարհս կայ՝ յարեւից, յարեւմտից, ի հիւսիսոյ և ի հարաւոյ: Նոյնպէս և ի մարդն՝ արիւն և խարտէշ մաղձն, սէվտան և պալղամն: Յարեւից հողմն տաք է և գէճ՝ քամոյ, յարեւմտից հողմն՝ շոր և հողոյ բնութիւն, հիւսիսոյն՝ հով է և գէճ՝ ջրոյ բնութիւն և հարաւային տաք և խորշակ կրակի է: Դ (4) ջուր կայ աշխարհս՝ աղի, լեղի, անուշ, հոտած: Նոյնպէս և ի մարդն՝ աչից ջուրն աղի է, ականջին՝ լեղի է, բերնին՝ անուշ է, միշացն՝ հօտած է, որ արտաքս ելնէ: Նոյնպէս և տարին, գարունն տղակութիւն է, բնութիւն արեան արեւից տաք և գէճ է: Ամառն ժՅ (15) մինչև ԼԲ (32) երիտասարդութիւն՝ տաք և շոր

98ա մաղձի է, հարաւային || ամառն և մէջօրեանն կրակի է: Աշնան բնութիւն մինչև խառնի ալիքն հով է և շոր սէվտայ է, արեւմտից՝ աշնանային է, հողային է: Զմեռն է ծերութիւն՝ Բ (2) օրն հով է և գէճ, հիւսիսային է, պալղամուն ի ջուր է և թուլ: Գարձեալ թէ աչից ջուրն շէր աղի, ճրագուն հալէր աշացն և լուսոյն գէն առնէր: Թէ ակնջին շէր լեղի՝ սողուն մտանէին ընդ այն և զղեղն ալիքէին և մարդուն շարածաղիկ լինէր: Եւ բերանոյն ջուրն վասն այն արար քաղցր, որ զուտելոյ և զըմպելոյ համն առնու և հոտած ջուրն արտաքս ելանէ:

Բայց 34Ե<sup>26</sup> (365) ոսկորն որ կա ի մարդուն այս են. է (7) գանկն է, ժԲ (12) երեսն և կղակն, ԼԲ (32) ատամն է, է (7) շլիքն է և շլեցն ի վարի դին է (7) այլ կայ, է (7) կուրցքն է, ժէ (17) ողնշարն է, ժԲ (12) կոճղն է՝ դիհն Բ (2) բէճն է, Զ (6) բաղուկն է, Խ (40) ձեռացն կոճն է, Դ (4) ոտներն է, || Բ (2) անդամն է, Բ (2) լսեռնէ, Բ (2) ոլոքն է, Բ (2) կոճն է, Խ (40) ոտիցս անտրերն է: Եւ տանուտէրն Զօհալն է և ուժն սէվտայի է: Կցեաց Աստուած զոսկերքն շլովք և զշիլն ի միսն և զմիսն երակօք պնտեաց, 34Ե (365) երակ սփռեաց ի վրայ մսին և զմիսն մորթովն հաստատեաց և մորթուն ուժն երակացն ի վեր է և քեզ վկայ՝ զի մարդուն մորթին ոչ արեւն շորնայ և ոչ ի ջուրն կակղանայ և դրջի:

Յորժամ ստրղծ Աստուած զմարդն գարուն էր և արեգակն ի Խույն էր, նիսանի Ա (1) գիշերն և ցորեկն պարապ էր արեր: Գարնան եղանակն տաք է և գէճ է և արիւն և մաղցն զարար է մարդուն: Վասն այն ասացին իմաստունքն թէ մարդուն շէրպէթ տալու լինիս կամ երակ առնուլն և այլն յայնժամ աղէկ է առնուլն:

25 Բնագրում՝ Դ ու ա է:

26 Բնագրում սխալ է. պետք է լինի՝ ՄԽԸ:

## ՎԱՍՆ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԳԼՈՒԽՆ ԵՒ ԸՂԵՂԻՆ Է ԱՅՍ

- 99ա || Եւթներորդն՝ վասն ստրղծման և գլուխն և ըղըղան: Գիտացիր, որ Գ (3) իրք ի մարդուն յանձն մեծ և շնահար է և պատական է քան զամենայն զօգուած և իր զօրութիւն ի յանձն աւելի է քան զամենայն որք բժշկական ասոնց յազայի ըոսսիայ ասեն և այս Գ (3) Ա (1) սիրտն է և ինքն թագաւոր է ամենայն անձին և Բ (2) ըղըղն, որ վեզիր է այն թագաւորին և Գ (3) լերդն, որ տանուտէր է ամենայն անձինն և բաժանող կերակրին և ամենայն անձինն: Եւ գիտացիր, որ ըղըղան տեղն գլուխն է և շատն այնոր համար է, որ աշքն գլուսն ի ըղեղէն կու առնու և տեսութիւնն ըղեղն է և աշքն անձինն պահողն է և թէ աշքն չբ լինի, նայ մարդ զանձն չրկարէ շուրջ ածել: Եւ գիտացիր || որ ըղըղան բնութիւնն հով է և գէճ է ինքն, և ի գլխուն մէջն է: Բայց գիտացիր, որ յայս Բ (2) փէրտէս ի գլուխն կիպ է և թէ իրենն զէն հասնի և միջի փէրտէն ծակ ունի, որ քիթն ծակու զէմէ կիջնու, որ ըղեղին յաւելուածն այն ի քթէն վայր ջաղէ: Եւ այն ծակէն, որ ըղեղն զհոտն առնու, թէ այն ծակն, որ կալնվի նա քիթն հոտ չի առնուր, և բուն լինալն և արդնալն յայն ըղեղէն է և ի ներքևս ըղեղին կիպ է և ինքն Գ (3) բաժին է: Եւ այն որ պօտունիս տմաղ ասեն և այն ամէն բաժինն յիրար կիպ է և այն պուտունիս կարմիր երկնի կա և ինքն ի շարժման է: Եւ այլ գիտացիր, որ առաջի բաժինն, որ ի ճակատին վերայ է քան զայն Բ (2) բաժինն: Այս այլ մեծ է և || ի յինքրն Աստուած զաշաց տեսութիւն է գրեր, և ի միջի բաժինն ունի զսգայութիւնն և զխելքն և թէ ասոր զէն հասնի նա մարդն սահր և սաթա լինի և լակուայ: Եւ Գ (3) բաժինն ունի զպահողութիւն և յիշողութիւն և այս քան զամէնն փոքր է և թէ ի յայս բաժինս քան կամ զէն հասանի, նա մոռացկոտ լինի և զինչ, որ ունի յուշ միտքն ձգէ՝ այսպէս է գրեր:

ՎԱՍՆ<sup>27</sup> ԸՍՏԸՂԾՄԱՆ ՍՐՏԻՆ

- 100բ Որ ինքն է անձին և իր բնութիւնն տաք է և շոր և իր տեղն ի կրծոց ներքեն ի ձախ դին է և ինքն քան զամենայն անգամ պատական է՝ ինքն հոգուն տուն է և զառողջութիւն և զտաքութիւն ի սիրտն է գրեր Աստուած: Եւ ինքն ամուր միս է և յայնմ ի մէջ է ամուր, որ պահէ զինքն յամենայն շարէ և իր ամանն հանց է, որ իսկի սիրտն ի յիրար չի դիպնուր ||: Եւ հանց զէտ փրփուր իրք ումի մէջն է և սիրտն այն կու զպչի: Եւ սիրտն նման է փիճոյ մրգի և բոլոր և իր վարի ծայրն բարակ և վերինն հաստ և հանց գիտացիր, որ սիրտն Բ (2) փոք ունի և Բ (2) ականջ՝ Ա (1) աջիկ զիհն է և Ա (1) ի ձախն: Եւ այն փորն, որ յաջ դին է՝ ինքն Բ (2) ծակ ունի ի յայն երակնէն, որ զարիւնն ի լերդէն ի սիրտն կուղարկէ: Եւ Ա (1) այն է, որ ի սրտէն ի թոքն կերակուր կուղարկէ, և այն փորն որ ի ձախ դին է և այն այլ Բ (2) ճանապարհ ունի՝ Ա (1) վասն

27 Ձեռ. № 212, պակասում են «վասն ըստրղծման սրտին», «վասն ըստրղծման լերդին», «վասն ըստրղծման փածղանքն», «վասն ստրղծման թոքին», «վասն ըստրղծման լեղուոյն», «վասն ստրղծման իրիկամացն» գլուխները:

101ա օղայ համար և Ա (1) որ ի թորն քամի հասցնէ ի շարժելովն և զինքն հովացնէ, և Ա (1) այլ այն է, որ ան մեծ երակին համար է, որ շիրեանին երակն յիրմէն կելնէ և զամէնայն անձն այն կու տարցնէ, որ յառաջն պիտի յիշեմ: Եւ ամենայն անձն, որ լերդէն երակ բաժնի ի սրտէն  
 101ա այլ բաժնի || քան զայն մեծ և հաստ: Եւ այն անձն, որ շիրեան զէն հասնի, նա այն տեղացն տարութիւնն այլ պակաս լինի մօտոյ: Գիտացիր, որ մարդուն տարութիւն յայն արեանէն լինի, որ ի սրտին մէջն է: Եւ յայնժամ, որ այն արիւնն ի հովութենէ կամ ի շորութենէ պաղի անհնար է, որ մարդն մեռանի: Եւ տէր Աստուած ի սիրտն Բ (2) փոր և Բ (2) ականջ անոր համար է ստեղծեր, որպէս Բ (2) աչք և Բ (2) ձեռք և Բ (2) ականջ և Բ (2) ոտք այնոր համար է, որ թէ Ա (1) զէն հասնի և այ Ա (1) մնա Աստուծոյ կարող զօրութեամբն և մարդուն ազատէ:

ՎԱՍՆ ԸՍՏԸՂԾՄԱՆ ԼԵՐԳԻՆ, ՈՐ Է ՏԱՆՈՒՏԷՐ ԱՆՁԻՆՆ

101բ Գիտացիր, որ լերդին բնութիւնն տաք է և գէճ է, և իր կեցուածն ի մարդուն ի կրծոյ ներքեն ի յաջ դիհն է, և իր կերպն նման է է (7) օրեա լուսին և ինքն ստամոզն ի կիպ է և ստամոզն այն, || որ ի փոսն է որպէս որ մէկ մի զթուրինճն ի ձեռքն բռնէ և լեղին այլ ի լերդին երեսն ի վայր կախէ:

Վարդապետքն ի յայտ արուեստն ասացեալ են թէ ինքն նման է կրակի և լերդն նման է քալիստի և ստամոքն նման է պտկի և կերակուր և ըմպելի ի յանոր մէջն և ի ստամոքին մէջն կիսակի լինի և լերդին երակնին զուծն ի յինքն քաշեն: Եւ յորժամ կերակուրն որպէս որ ի գետին ջուր կենայ և ծառին մազմզուկն ի յինքն քաշէ և յորժամ կերակուրն ի բարակ աղիքն հասնի, նայ լերդին երակն զայլ գիճութիւն ի յինքն քաշէ և զայն գիճութիւն՝ լերդն արիւն դարձուցանէ և զայն արիւնն բաժանէ յանձն, որ պէտ անէ իր և քիչ մի յինքն պահէ և որ անդամն, որ արիւնն պակասէ յայնտեղն ուղարկէ, որ վատուծ չըլինի:

102ա ՎԱՍՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՓԱՄՂԱՆԸՆ

Գիտացիր որ Աստուած զփայծեղն հով և շոր է ստեղծեր և իր կենալ տեղն ի կրծոց ներքեն ի ձախ դին է և ինքն քիչ մի երկան է որպէս եզնալեզու: Եւ այն դին, որ ի ստամոքն կիպ է, քիչ մի փոս է: Եւ Ա (1) մեծ երակ մի փայծղէն ի ստամոքն կիպ է որպէս ձկան բերան ունի: Բ (2) բերան ունի՝ և Ա (1) բերնին պատճառն այն է, որ զսէվտան ի ստամոքէն վաղէ յայնժամ, որ ստամոքն պարսպ լինի կերակրէ և ստամոքին ուժն կերակուր տա ուտել և անոր պատճառովն կերակուր տա ուտել, որ ինքն զարիւնին մրուրն յինքն քաշէ և սէվտա առնէ և իր կերակուրն այն մրուր արիւն է: Եւ հանց գիտցիր, որ փայծեղն մարմին մի է ցանձառ և մէջն փունճ փունճ և ինքն այնոր համար, որ թանձր արիւնն յինքն քաշէ և ինքն անձինն ախտոն է:



102բ

## ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԹՈՔԵՆ

- Գիտացիր, որ Աստուած զթորին բնութիւնն հով և գէճ է արեր և ինքն ի կրծոց մէջն կախուէր է և ինքն Բ (2) շարժումն ունի. Ա (1) Ա (1) հակառակ: Եւ գիտացիր, որ հէքիմն ամէն շարժման անուն մի ասեն. Ա (1) հէրէքէթ-ի [ի]նպիսաթ և մէկին հէրէքէթ-ի [ի]նդպագ: Եւ հէրէքէթ-ի [ի]նպիսաթն այն է, որ ի ժիր գհով քամին ի խոշակն ի վար քաշէ վասն տաքութեան սրտին համար, որ սրտին տաքութիւն անձինն զէն շանէ: Եւ հէրէքէթ-ի ինդպագն այնոր համար է, որ թորն զտաք բուխարնին, որ կաննէ յինքն և խոշակէն ի դուրս կու վարէ, որ ի բերնին ճամբէն և ի քթէն ի դուրս ելանէ: Եւ գիտացիր, որ արարիչն Աստուած զթորին միսն կակուղ և թրթև միս է արեր և մէջն փունճայ,
- 103ա նորա || համար է, որ ինքն քամու տուն է և սարվազն է, որ ի ժիր ի յանձն քամի բերէ և որ սիրտն յինքն քարշէ որպէս յիշեցար: Եւ յորժամ քամին յանձն ժողովէ և քիշ քիշ ի սիրտն հասնի և զսրտին տաք քամին յինքն կու քաշէ և այն պատճառն է, որ մարդն կու զրուցէ և շունչ կաննէ և կու տայ և ի ժիր շի պակասիր իր անուրն և տայն: Եւ շես տեսնուր, որ թէ մարդ զգլուխն ի ջուրն խօթէ նա Ա (1) ժամ չըկարէ համբերել և շուտ կու հանէ զգլուխն ի ջրէն և պահ մի շի համբերեր: Եւ այն պատճառէն է, որ ի թորն արգիլած պոլխար կապի, պիտի որ թորն զայն հանէ և ի տեղն հով բերէ և թէ որ չըբերէ նա ի ժ[ա]մուն սպանանէ զմարդն || այն պատճառովն որ պոլխարնին ի ներս մնա:
- 103բ

- Եւ այլ թորին զօրութիւն այն է, որ յորժամ քամին ի յինքն քաշէ նա զինքն լատիֆ այն է և զինքն ի սիրտն զրկէ զի կենդանութեան հոգոյն կերակուրն քամին է, որ հոգուն ուժ տայ և զօրացնէ: Որպէս որ լերդն սարվազ է, որ զկերակուրն արին անէ և ամենայն յանձն քաժանէ և թորն այլ սարվազ է, որ զքամին անուր և տայ սրտին, որ զհոգին կերակրէ և զայն օթն որ ի սիրտն հասնի և ի սրտէն ի շիրեանն հասնի և անկից ըղեղն հասնի և լինի հոգի զգաստութեան որ է նալսանի ասեն: Եթէ անկից հասանի լերդն՝ նա լինի հոգի որ բնութեանս ասեն, որ ըրուհի տապալի ասեն և զայսոց այլ խորու զօրութիւնն տէր
- 104ա Աստուած գիտէ և պատճառ պատմելոյն այն է, որ գիտենան || զիմաստութիւնս զայս:

Եւ գիրքս կու յիշէ զայն, որ պետք է մեզ և օգուտ է բժշկութեան:

## ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԼԵՂՈՅՆ

Գիտացիր, որ լեղուն բնութիւնն տաք և շոր է և իր բնական տեղիքն ի լերդին երեսն է բուսէր, որպէս որ յառաջն յիշեցար: Եւ լեղին այլ Բ (2) բերան ունի, որպէս զէտ զփայծղան և Բ (2) բերանն այն է, որ զսաֆրան ի լերդէն ի յինքն քաշէ և Ա (1) բերանն այլ զսաֆրան ի ստամոքն վաղէ, որ զպալղամին զպեղծն և զսուրն և զլեղին ի ստամոքէն ի դուրս հանէ: Զմարդն ի մեծ զահմէթէ պահէ և զանձն թրթևացնէ: Եւ զօրութիւն լեղոյն այն է, որ զսաֆրան չարենէն քաժանէ և յինքն քաշէ և յիստիկէ:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԻՐԻԿԱՄԱՑՆ

104բ Գիտացիք, որ իրիկամին զօրութիւնն և բնութիւնն տաք է և գէճ, և իր տեղիքն կոնտակին || ներքին է: Եւ յաչ իրիկամն լերդին մօտիկ է, անոր համար յերկան է [բան] ձախ իրիկամն, բայց Բ (2) իրիկամին տեղն այլ մէկ մէկի մաւտ է և ամէն մէկի փոսն Ա (1) մեծ երակ մի կայ, երակին մէջն փունճ է, որ ինքն որպէս շիրեան է և ի լերդն կից է և Բ (2) երակին ծարերն այլ ի հալարուշտն կիպ է և յիրմէն սերմն գայ: Եւ վարդապետքն յայս արուեստն ասացեր են թէ յորժամ սերմն յայն երկուսին ծայրն հասանի, որ ի լերդն կիպ է՝ արիւն լինի և միւս ծայրն հասանի, որ ի հալարուշտն կիպ է՝ ապայ սերմն լինի: Եւ այլ գիտացիք, որ գոգին ճանապարհն այլ ի յիրիկամէն է և յորժամ գոգն ի յիրիկամն գայ նա դիժար թրւենայ:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՍՏԱՄՈՔԻՆ ԵՒ ՅՕՐԻՆՈՒԱԾՈՅ ՆՈՐԻՆ

105ա Գիտացիք, որ ստամոքին բնակարան տեղն ի կրծոց || ներքին է, բայց վերին դիճն բիշ մի ձախ դիճն է և ներքի դիճն ի յաջն մօտ է, և սիրտն և լերդն և փայծաղն ի նորա բոլորն է, որպէս որ լերդն ի յաջն է և փայծեղն ի ձախն և ներքին ամուր միս կայ և վերին նօսր միս կայ: Եւ ասոնք ամէնն ի ստամոքի բոլորն են Բ (2) իրաց համար, Ա (1) այն է, որ թէ զստամոքն տաքցնէ, որ զկերակուրն կարէ հալել և Բ (2) այն է, յորժամ որ մարդն ուժով բան առնէ նա իր տեղացն չը խախտի: Եւ ինքն որպէս դուռ է, որ երկու վիզ ունի և այն, որ ի կոնակի դիճն է, տափակ է և այն, որ ի փորուն դիճն է գունտ է պարպուտ, և ինքն կոհար է փուճ փուճ անոր համար է, որ այլ տեղաց ուժ առնու կերակուր ուտելու համար: Եւ խիստ ուժ ստամոքին բերանն է և այս է զօրութիւն, որ քաղցեցնէ դմարդն: Եւ մէջն || գէճ է, որպէս ընկուզ և մեծ է և յերկան շէ, և ինքն Գ (4) ուժ է ստղծեր Աստուած: Ա (1) ասեն բժիշկն զուվաղ ճաղիպայ, թէ քաշող է զկերակուրն ի յինքն, և երկրորդին ասեն զուաթ մասիբա, թէ յորժամ, որ ստամոքն կերակուր մտնէ նա կենա և հալի և շելանէ ստամոքէն ի դուրս, և Գ (3) ասեն զուվաթ հաղիմայ, անոր համար է, որ զկերակուրն մարսէ և խակ չըմնայ, և Գ (4) ասեն զուվաթ-ի տայֆեայ, որ է ի դուրս հանէ՝ յայնժամ արտաքսելանելոյ է և յորժամ, որ այս ուժն վատուծի նա փորն կապի և վնաս բերէ անձինն և զէն անէ: Եւ շատ զէն և վնաս անձին ստամոքէն գայ և ոմանք ասացին ի բժշկապետացն, թէ ամենայն զօղուածք Գ (4) ուժ և զօրութիւն է:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԱՂԵՅՆ

106ա Գիտացիք, որ աղեցն կազմելիքն || որպէս ստամոքին է և ամէնն Զ (6) աղիք են՝ Գ (3) վերինն բարակ է և պինտ է, և Գ (3) ներքինն հաստ և թանձր է: Բայց բժիշկն վերի աղեց միոյն ասեն իսնայշարիայ, որ է ԺԲ-ն (12) և է իր երկայնութիւնն ԺԲ (12) մատ թէ մարդ է, թէ

տղայ և ինքն ըղորդ է գէտ այլ աղիքն՝ ծուռ և փաթաթ չէ և Ա (1) ծայրն ստամոքին ներքին է, այնոր պապ ասեն: Եւ Բ (2) ասեն սայիմ, անոր համար ասեն, որ ինքն փայթման է և յինքն կերակուր կու հայի և չի մնար ի մէջն: Եւ Գ (3) ամախտ դաղ ասեն և ինքն պուտ պուտ է և ի յայս աղիքն կերակուր շատ չի կենար: Եւ այլ գիտացիր, որ վարի Գ (3) աղեցն բժիշկն Ա (1) միայ-ի ավար ասեն և ինքն աղիք է լայն և Ա (1) բերան մի այլ ունի յայն դիհն, որ ի վայր իջնու և ինքն նման է քէսէի, և Բ (2) ասեն ամյայի դուլին || և ինքն աղիք է լայն և այս ամենուս ներքին է ի կարգին: Եւ Գ (3) ասեն միյայ-ի մուսթաղիմ և ինքն աղիքն է լայն քան զամէնայն և Ա (1) ծայրն ի նստելտեղն կիպի և Աստուած զայս աղիքս ծուռ և փաթութ այնոր համար է ստըղծէր, որ կերակուրն ի յինքն արգիլէ և զարութիւն առնէ և այնոր համար Գ (3) վերին աղիքն բարակ է և Գ (3) վարինն հաստ, որ մարդ շուտ շուտ ի դուրս շելնէ և համբերէ և կենա ի յայն աղիքն և այս աղեցն վերի ծայրն ի կողին ներքին է, և Ա (1) ծայրն ստամոքն կիպ է: Եւ այս աղիքներս սարվազ է անձին առողջութեան և կերակրելուն և զօրութեան և ուժովութեան, որ պիտի:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՀԱԼԱԲՇՏԻՆ

Գիտացիր, որ հալարուշտն մարդուն յաճուկն է և վիզ ունի որպէս  
 107 ա շիշէի և վիզն բարակ և մէջն լայն որ զգոզն || ի մէջն առնու և յամէն ժամ մարդն շրգոզէ: Հալարուշտն պինտ և ամուր է յօրինած, անոր համար սաֆրաին գիճութիւնն շօիրէ զինքն և ի բերանն քիշ մի միս կայ և Ա (1) երակ մի զինքն բոլոր է ածեր և Ա (1) երակ այլ ճուճ է փաթրվեր: Եւ այն կտոր մի միսն, որ ի հալարշտին բերանն է նայ զԲ-ն (2) այլ կու պահէ և գոզն յամէն ժամ ի նոյն տեղն կու դադարի և յորժամ որ ի դուրս վաթէ նա երակն կու թուլնա, մարդ զգոզն շրկարէ արգիլեր ի յայն երակին վատուծութենէն և իժիր ի ճուճէն ծայրէն ջուր կու կաթէ: Եւ այլ ասկից ի վայր յիշենք զգուրսի զաւղուածքն որ մեղի պարտ է խիստ:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԵՒ ՅԱԻՐԻՆՈՒԱԾՈՅ ԱԶԱՅ

Գիտացիր որ տէր Աստուած զաչք ի փոս տեղ անոր || համար է ստըղծէր, որ ինքն քան զամենայն անզամ պատուական է և ճակտին ոսկորն անոր համար ի դուրս է ստեղծէր որ զաչքն պահէ յամէնայն շարէ և զունքն անոր համար է ստեղծէր Աստուած որ զաչքն պահէ և ի հեռու տեղաց տեսնելու ուժ տայ, և զթարթիչքն պահապան է աչիցն, որ զհոզն ու զփոշին և զայլ իրք պահէր, որ չըմտէ: Եւ այլ հանց գիտացիր, որ Աստուած զաչքն է (7) տապաղա է ըստըղծեր և Գ (3) գիշութիւն և ամէն գիշութիւն Ա (1) գուն է՝ աղզի աղզի: Եւ գիտացիր առաջի տապաղան, որ աչիցն ի դրսի դիհն է, բժիշկն այնոր տապայ-ի մուլթահիմայ ասեն<sup>28</sup>, այնոր համար որ ինքն զաչից բոլորն զամէնն ի մէջ առեր

<sup>28</sup> Աչքի կազմախոսութեան մեջ Հովասափ Սեբաստացու կիրառած անվանումները համընկնում են Աբուսայիգի, Մխիթար Հեբացու և Ամիրզոյլայի՝ աչքի կազմախոսութեան և բնա-

- 108ա է և ինքն խիստ նաւոր է և գունն խիստ ըսպիտակ: Եւ Բ (2) տապաղա-  
 յին. ասեն տապաղաչ-ի զարունիայ || և ինքն պինտ է և գունն խիստ  
 սպիտակ է և Գ (3) տապաղան ասեն յանապիայ, որ ինքն նման է խա-  
 դողի հատ և դուրսի դիհն գունտ է և ներսն գունտ չէ և քիչ մը ըսպի-  
 տակ է և Դ (4) տապաղաչ-ին ասեն յանքասութիայ այնոր համար, որ  
 ինքն նման սարդի ոստան և գունն խիստ սպիտակ է և յիտակ: Եւ Ե  
 (5) տապաղաչ-ին շապարա ասեն և ինքն նման է յայն շարին, որ ի  
 տղին երեսն կու լինի երբ ծնի և ինքն խիստ նօսր է: Եւ Զ (6) տապա-  
 ղաչ-ին սուլպիա ասեն և ինքն խիստ պինտ է քան զամէն տապաղանին,  
 որ յիշած է: Եւ է (7) տապաղաչ-ին ճալիտիա ասեն և ինքն նման է պա-  
 ղին և ամուր է: Եւ զայս ամէն տապաղանիս, որ յիշեցար ամէն Ա (1)<sup>29</sup>  
 Ա (1) զարութիւն ունի, և առաջի տապաղաչին զօրութիւնն այն է, որ  
 զան գիճութիւն, որ ճալիտայ ասեն ի զարկուց և այլ վնասէ պահէ:  
 108բ || Եւ Գ (3) տապաղաչին զարութիւնն այն է, որ երկուսում տապաղան  
 կերակրէ և զիր պնտութիւն գիճութիւն ճալիտայ տաֆ այնէ և ի ժիր զա-  
 ջից լոյսն ի տեղն պահէ և զամէնայն իրք մարդն յիտակ տեսնու և զա-  
 ջից լոյսն չը ցրուէ և ի տեղն պահէ: Եւ Դ (4) տապաղաչին զօրութիւնն  
 այն է, որ Գ (3) տապաղան պահէ և կերակրէ<sup>29</sup> և զճալիտային գիճու-  
 թիւնն ի պնտութիւնէ է՝ և խոշորութիւնէ պահէ: Եւ Ե (5) տապաղաչի  
 զօրութիւնն այն է, որ ինքն տեսութեան հոգուն կից է և զրոտուպատ  
 ճալիտիայն պահէ և կերակրէ և ըոտուպաթ զուճաճիէն յինքն տայ: Եւ  
 Զ (6) տապաղաչին զարութիւնն այն է, որ և ըոտուպաթ ճալիտիային ի  
 109ա տարութիւնէ ի շիրեանին և ի մէջ տապաղաչին || շապարիային պահէ և յի  
 անցնի որ յիրմէն շարժումն գայ: Եւ է (7) տապաղաչին այն է, որ զէն  
 և վնաս յաջիցն ի ոսկրէն և աշիցն ի բունէն և ամէնայն տապաղաչէն  
 յետ պահէ և զաչքն ի յիր տեղն ամրացնէ:  
 Եւ այլ հիշեմ զԳ (3) գիճութիւն՝ թէ որպէս է: Եւ յառաջի ըոտուպա-  
 պատն է, որ է գիճութիւն՝ որ է պաղիան և է ինքն գէճ որպէս հա[ւ]կթի  
 սպիտկուցն և սպիտակն: Եւ Բ (2) ըոտուպաթն ճալիտիայն է և ինքն  
 յիտակ է որպէս պաղ: Եւ Գ (3) ըոտուպաթն, որ է զուճաճիայ և ինքն  
 յիտակէ որպէս ապիկի հալած և ըոտուպաթ ճալիտիայն ի յաշիցն մէջն  
 է, որ կու տեսնու և ինքն խիստ իտակ է և պսպղուն և ինքն ի տեսու-  
 թիւն շատ տեսնու և ցոլա և կերակուր նորա ըոտիպաթ զուճաճիայէն  
 109բ է և ինքն ըոտիպաթ պաղիանի յառջևն է և ինքն || գիճութիւն ունի և  
 զօղին զշորութիւնն տանի: Եւ հանց որ զան է (7) տապաղան, որ յիշեցի  
 և Գ (3) ըոտուպաթ և յառջև ճալիտիայ և ըոտուպաթ ազիայ՝ Գ (3) տա-  
 պաղին յետն է: Եւ աջից սեութիւն ի մէջ Գ (3) տապաղաչին է և մէջն  
 պարապ: Եւ յառաջի բաժին ըղըզան ի յաչքն է եկեր մինչև ըոտուպաթ  
 ճալիտիանն ի պուխարէ և տեսութեան և լուսուն աշիցն գայ և այն-  
 ջղերն, որ մէջն փուճ է, և կփ մթնէ, կու լաննայ և լուսն նեղ լինի և յոր-

խոտութիւն տեքմինոլոգիային, որի մանրագին բնութիւնը տե՛ս Արուսայիզ, Յաղագս կազ-  
 մութեան մարդոյն, աշխ. Ս. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 18—24, 37—45:

<sup>29</sup> Բնագրում՝ կրակէ:

ժամ, որ այն շղերն որ լայն լինի՝ նայ աչքն իսկի շրտեսնու: Եւ շատ կայ հանց մարդիք և բժշկնին, այնոր ինդիշար ասեն և Աստուած զայն իսկի մարդու շք տայ: Եւ զկերպն աշիցն և զլուխն և զմէջն փուճ Բ (2) 110ա շղին և զաշիցն լուսուն անցնելու տեղն || և զթէրքիպն փէրտէներուն զոռթպաթին զամէնն ի կերպ բերեմ, որ ուսնողին հեշտ լինի և աղէկ իմանայ:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԱԿԱՆՋԻՆ

Գիտացիր, որ զականջն Աստուած անոր համար է ստրղծեր, որ լսելուն և ձայն առնելուն և հասկանալուն սարվազն է և իր ծակն զէտ քեղիկոնի ծակ է և ինքն զէտ նաւի լելքն է: Եւ Աստուած զայն անոր համար հանց արեր է որ հող և փոշի շրմտնէ ի մէջն: Եւ զի ջուրն լեղի է արեր անոր համար, որ ճանճ և ճիճի ի մէջն շրմտնէ: Եւ այն լեղի ջուրն որպէս զէհիր է և կու սպանէ զկենդանին, որ ի յականջն մտնու:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՔԹԻՆ

Գիտացիր, որ այս քթին մարդու երսան շնորքն է և առանց քթին իսկի մարդուն երեսըն շնորք չունի և մէջն երկու բաժին է: Եւ այն, որ 110բ ոսկորն որպէս կոճուկ է և Գ (3) յօկտութիւն ունի: Յառաջինն || այն է, որ շունչ կառնու և Բ (2) այն է, որ զհոտն զաղէկն և զվատն կու ճանաչէ և Գ (3) այն է, որ զպիղծ ֆազլանին ի յրղեղէն ի վայր իջեցնէ և յիստակէ զանձն և բանայ և զհոտն աղէկ առնու<sup>30</sup>:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՊՌԵԿԱՅ ԵՒ ԼԵԶՈՒԻՆ

Գիտացիր, որ պոկունքն բերնին պահարան է և ակոային փէրտէն է: Եւ այնժամ, որ սկսնու զրուցել՝ նա պոկունքն և ակոան է, որ զմարդուն խօսքն աղէկ այնէ: Եւ թէ ակոան և պոկունքն չլինար, նա մարդ չէր կարեր աղէկ զրուցեր: Եւ լեզուն նօսր և բարակ և կակուղ միսմ է և խօսելոյն սարվազն է և ի խօսքն իսկի պակասութիւն չի թողուր և ինքն գիճութիւն ունի և կակուղութիւն և ամէն գիճ կու ճկի և զկերակուրն կղորդէ, որ ծամելոյն հեշտ լինի: Եւ ինքն ունի ի շիրեանէն շատ երկ- 111ա նի || և ի լեզվին ծայրն է ժողովէր, որ զպալղամն ի բերանն ժողովէ: Եւ այն, որ սաքպաթ ուլ լուսպ ասեն և ի յայս զօրութիւնս Բ (2) պատճառ ունի՝ Ա (1) այն է, որ ի ծիր գէճ լինի և թէ շոր լինի գիժար է զրուցելու, և Բ (2) այն է, որ թէ շոր լինի նա մարդն ոչ կարէր կերակուր ուտէ և հեշտ հալէ:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԶԵՌԱՅՆ

Գիտացիր, որ Աստուած զշատ զօրութիւն ի ձեռքն է դրէր և զարկ արուրստնին բանիլն՝ որպէս գրագրութիւն կամ ծաղկել և զինչ որ նոցին

30 Այստեղ ավարտվում է № 212 ձեռագիրը:

նմանէ: Եւ Ե (5) սպայութեան Ա (1)՝ ի ձեռքն է, որ զկակուղն և զպինտն, զծանտրն և զթեթիկն ձէռքն ճանաչէ: Եւ զվաստական ձեռքն այնէ: Կա, որ թէ ի մարդուն յանձն օտար ձեռք հասնի՝ նա ձեռքն պահէ և չըթողու:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԾԸԾԵՐՈՒՆ

111բ Գիտացիր, որ || ծծերն թոյլ միս է և շիրեանին երակնին յինքն կիցէ և իր դօրութիւն այն է, որ զմանուկն կերակրէ և զկերակուրն տղան ի ծծէն ուտէ: Եւ յորժամ տղան ի մօրն փորն լինի՝ զմօրն հայզին արիւնն ուտէ: Եւ ի լերդին և սրտին տաքութիւնն զհայզին դարիւնն հալէ և շիրեանին արիւնն ի ծիծն երթայ և հալի և ծծին բնութիւն զայն կաթ անէ և սպիտակ լինի և այնոր համար ծծին միսն սպիտակ է և կաշկուղ է և կաթն այլ սպիտակ է և կակուղ է: Եւ պատեճ է, որ ծծին միսն զայն արիւնն կաթ անէ և տղան ուտէ: Եւ պատճառն այն է, որ կաթն ի հայզին արու- նէն է և ծծին այլ ի յարգանդն կից է: Եւ պատճառն այն է և յորժամ կինն յղի լինի, պիտի որ հա[յ]զն կապի և տղին կերակուր լինի մինչև ծնի: Եւ թէ կնկան ձախ ծիծն || թոշմած լինի գուշակէ, որ աղչիկ անցնէ: Եւ թէ յաչիկ ծիծն թոշմած լինի գուշակէ, որ կտրիճ տղա անցանէ պատաղվորն:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԶԸԻԵՐՈՒՆ

Գիտացիր, որ ձեւերն սերման տուն է արեր Աստուած և Բ (2) այլ սպիտակ և ճերմակ միս է և կակուղ և ցանցառ է: Եւ ամէն Ա (1) ի Ա (1) իրիկամն ի կից է և կայ ի յինքն ի շիրեանին երկնէն երակն և իջնու՝ սերմն ի երիկամացն կիսահփ և գա ի ձուն և լման եփի և գունն սպիտակ է և թանձր և լազիճ լինի և հանց, որ արիւնն ի ծիծն եփի: Եւ Բ (2) մեծ ծակ ի ձրւնն ի ճուճն կիպ է և բժիշկն այն ծակերուն ավի ամանի ասեն և ինքն եփի ի ձուն և երբ պիտենայ՝ նա դուրս վաղէ ի յարտարս:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՃՈՒՃԻՆ

112բ Գիտացիր, որ ճուճն զօղուածքմն է մէջն փուճ է և ի մէջն իսկի գիճութիւն շկայ և ինքն շեղ է և երկնուկ է, որ ի մերձաւորութեան ժամն զհամն առնու և այնոր համար մէջն փուճ է || որ ի մէջն քամի մտէ և կանգնի՝ մերձաւորութիւն առնէ և զսերմն ի ըղեղն հասցնէ և շուտ ի վայր թափէ: Գիտացիր, որ կնկան և այրին ի յայս անդամս մէկ է, այնոր համար, որ կնկան ի ներսն է և էրկան ի դուրս է: Եւ հանց, որ մարդուն ճուճն ի վիզն և կնկան արգանտին վիզն Ա (1) է և կնկան ձուն ի յարգանտին ի քովն է և բոլոր է և պինտ է: Եւ էրկանն թուլ է և այսպես են գրեր փոքր ի շատէ:

ՎԱՍՆ ԸՍՏԵՂԾՄԱՆ ՈՍԿԵՐԱՅՆ ԵՒ ՄՍԻՆ ԵՒ ԶՂԻՆ ԵՒ  
ԿՅՈՒԱԾՈՅՆ ՄԱՐՄՆՈՅՆ ԵՒ ԱՄԷՆԱՅՆ ԱՆՁԻՆ

Եւ գիտացիր, որ մարդուն ամբողջ ոսկորն Մե՛լ (248) ոսկոր է և ի յայս ամէն ոսկերացն՝ է (7) ի գլուխն է և ԼԲ (32) ի ակոան է և Գ (4) ի վզին ողաշարն է և ի Դ (4) ի կողն է և է (7) ի կուրցքն և Գ (4) ի բազուկն և Դ (4) ի Բ (2) ստրն և Դ (4) ի կրունկն և Բ (2) ի թաթն և Բ (2) յառջևն և Բ (2) յետևն և Լ (30) ի մատներն:

113ա Եւ թիւն ամբողջ ջղացն մարդուն շէ (77) ջեղ է և ամէնն է (7) ջուխտակ է: Ի բղեղն է ԷԼԵՐ և Ա. (1) ջուխտակն աշքն, Բ (2) ջուխտակն ի կոպերն ի կիպ և Բ (2) ջուխտակն ի Բ (2) ականջն է և ի քիթն || և ի պոկունքն կիպ է: Դ (4) ջուխտակն ի խոշակն և ի լեզուն ի կից է և Ե (5) ջուխտակն ի յականջն և ի վիզն կից է և Զ (6) ջուխտակն ի մէջ փորուն է և է (7) ջուխտակն ի լեզուն և ի յականջն ի կից է և ԼԱ. (31) ջուխտակն այն է, որ հիմնէ ի մարդուն բղեղնէ և ի կոնակնէ՝ ի դուրս գայ և լինի ողոշարին պարապար և յետոյ ճապղի: Եւ է (7) ջուխտակն ի վիզն է և ԺԲ (12) ջուխտակն ի կոնակն է և Ե (5) ի փորն է և Գ (3) ջուխտակն ի սրունքն է և Գ (3) ջուխտակն ի ողաշարքն է և երթայ ի յողոշարէն ներքեւէն մինչև ի նստայ տեղն: Եւ գիտացիր, որ մարդուն ջղերուն թիւն այս է և ասոնց ծայրերն ի յամբողջ մարմինն ճապղեր է և բարկըցեր է խիստ:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԷԶԱՆԵՐՈՒՆ, ՈՐ ԿՏՈՐ ՄԻ ՄԻՍ ՅՈՍԿՈՐՆ

113բ Եւ ինքն ՅԻ (320) է: Եւ այս ամէնէն ԻԳ (23) ի գլուխն է և Դ (4) ի յաջուին է և ԽԳ (43) յերեսն է || և ի պոկունքն և ի բերանն է: Եւ Թ (9) ի լեզուն է և Ի (20) ի կզակին ներքևն է և ի կուշտն և Զ (6) ի վիզն է և ԻԶ (26) ի ձեռուին և Զ (6) ի թևերն է և ԼԴ (34) ի մատներն և ԼԶ (36) յարն է և ՃԷ (107) ի կուրծքն է և Դ (4) ի նստեկատեղն է և ԻԳ (24) ի սրունքն է, ԺԶ (16) ի յանգամն և ԼԱ. (31) ի յաճուկն ի վայր և Մ (50) յոտվին լինի և այս է էզանին:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԵՐԱԿՈՒՆ, ԹԷ ՔԱՆԻ Է ԵՒ ՔԱՆԻ ԲԱԺԱՆԻ

Գիտացիր, որ ամէն երակ մարդոյն ՅԿՆ (365) երակ է և այս ՅԿՆ (365) երակէս ՃՄՆ (155) երակն կու շարժի և ՄԺ (210) չի շարժիր և այս ամէն շարժող երակներն որ կան Գ (3) երակ մեծ է՝ Ա. (1) կիֆա[լ]ն է, Բ (2) ակհալն է և Գ (3) պասիլիկն է և այս Գ (3) մեծ երակն ամէն Ա. (1) ՃԻ (120) երակ է բուսեր և այս երակնին, որպէս ծառ և ճիւղ է և այն երակնին, որ ի շարժման է ի սրտէն կելնէ և այն, որ անշարժ է ի լերդէն կելնէ:

114ա ՎԱՍՆ ՕՐԻՆՈՒԱԾՈՅ ԵՒ ԸՍՏԵՂԾՄԱՆ ՓԱՅՎԱՆԴՆԵՐՈՒՆ

Գիտացիր, որ ի մարդուն յանձն մեծ և փոքր ԶԹ (309) փայլանդ է և ի յայս համարէս՝ ՃԽ (140) ի գլուխն է և ի յերեսն և ԺԸ (16) ի վիզն է, ԽԸ (48) ի կողն է, ԺԴ (14) ի կուրծքն է և Դ (4) ի բազուկն է և

Ը (8) ի թեքերն է և ԼԲ (32) ի մատներն է, և ՓԸ (18) ի ձեռաց վերևն է և Կ (60) ի մատունքն է և ԼԴ (34) ի կոնակն է և Դ (4) ի ծունկն է և Ը (8) ի կրունկն է և Ը (8) ի կրկին առջևն է և Ի (20) յտիցն վերևն է և Կ (60) ի յտից մատներն է:

ՎԱՍՆ, ՈՐ ՅԻՇԵՆՔ ԶԵ (5) ՍԳԱՅՈՒԹԻԻՆՔՆ ՄԱՐԴՈՅՆ

Գիտացիր, որ տէր Աստուած ի մարդուն Ե (5) սգայութիւնք է ըստըզծեր և մարդուն կատարելութիւնքն Ե (5) սգայարանօքն է և մարդուն զբնութիւն կրակին ունի և լուսն կրակովն է ցօրեկովն ի օրինակ քեզ՝ որ քանի հեռու լինի նայ լուսօորութիւն առաւել լինի: Եւ Բ (2), որ լսելիքն որ լսէ զձայնն և է ի ականջէն և ինքն քիչ է քան զաչաց զգայութիւն և ինքն զքամու բնութիւն ունի այնոր || համար որ զձայնն և կանչելիքն շուտով լսէ և չէ քան զաչքն: Եւ Գ (3) սգայութիւնքն, որ կիմանայ զանուշ հոտերն և զչանուշն, թէ հոտվտայ քթովն և ինքն պակաս է քան զլեսիլքն և ինքն զզրի բնութիւն ունի և այն պատճառովն է: Եւ Դ (4) համն իմանալ զքաղցրն և զլեղին և զաղին ինքն լեզուէն է և իր ուժն պակաս է քան զհոտվտայն: Եւ Ե (5) իմանալ զխոշորն և զկակուղն և զպինտն: Ինքն ունի զհողի բնութիւն, ինքն լինի ձեռովին և ի ետովին և ծանտրն և զթեթևն, զկակուղն և զպինտն յիմացուի և Աստուած չիր ողորմութենէն է ըստըզծեր զամէնն, Ա (1) ի մէկ տեղ է զրեր և յորժամ այս Ե (5) ըսգայարանացն, որ Ա (1) պակաս լինի, նա Ա (1) այլ պակաս չի լինիր, հանց որ հոտն քիթ կառնու և աչքն չառնու, և ձայնն ականջն լսէ և քիթն շըլսէ, և այլն այսպէս է, զուր կու յիշենք: Եւ զայս անդամնիս, որ կու յիշեմք հանց որ ամէնն լման լինի նայ զոհութիւն տայ Աստուծոյ և յամէն ժամ օրհնէ զԱստուած:

Հրատարակվող բնագիրը մատչելի ու հասկանալի դարձնելու համար նպատակահարմար համարվեց ստորև տալ բնագրում հանդիպող օտար և անծանոթ բառերի համառոտ բացատրությունը, հետևյալ սկզբունքով. նախապես տրված է բառը բնագրի ուղղագրությամբ, այնուհետև փակագծում նշված է լեզվական պատկանելիությունը՝ (ա.)—արաբերեն, (պ.)—պարսկերեն, (թ.)—թուրքերեն, (հուն.)—հունարեն, (հ.)—հայերեն: Քանի որ արաբական բառերն ու տերմինները միջնադարյան հայերեն բժշկարաններում միօրինակ տառադարձություն չունեն, այդ պատճառով տրվում է բառի ճիշտ արաբատառ ձևի ժամանակակից արևելագիտության մեջ բնորոշված լատինատառ տառադարձությունը, որին հաջորդում է այդ բառի հայերեն բացատրությունը և լատիններեն համարժեքը: Օտար բառերի ու տերմինների ստուգաբանության հարցում մեզ օգնել է պրոֆ. Հ. Փափազյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Զեռքի տակ ենք ունեցել հետևյալ գրականությունը.

1. Արուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն, աշխատ. Ս. Ա. վարդանյանի, Երևան, 1974:
2. Ալիշան Ղ., Հայ բուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ, 1895:



3. Անառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Գ, Երևան, 1971—1979:
4. Ամիրզոլլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան: Խմբագ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940:
5. Ամիրզոլլաթ Ամասիացու Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց: Ի լոյս էած հանդերձ ծանոթագրութեամբ Կ. Յ. Բասմաշեան, Վիեննա, 1926:
6. Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց: Աշխատասիրությամբ Ա. Ս. Կժոյանի, Երևան, 1962:
7. Լատին-ուս-հայերեն բժշկական բառարան, Երևան, 1951:
8. Մատուցան Ք. Գ., Բույսերի անունների լատիներեն, հայերեն, ուսերեն բառարան, Երևան, 1970:
9. Ղազարյան Ռ. Ա., Բուսանունների հայերեն-լատիներեն-ուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Երևան, 1981:
10. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. Ա-Գ, Երևան, 1944—1945:
11. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Երևան, 1979—1981:
12. Փէշարմալեան Գ., Բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Կ. Պօլիս, 1844—1846:
13. Баранов Х. К., Арабско-русский словарь, М., 1957.
14. Миллер Б. В., Персидско-русский словарь, М., 1953.
15. Bedevian A. K., Illustrated Polyglotic Dictionary of Plant Names, in Latin, Arabic, Armenian, English, French, German, Italian and Turkish Languages, Cairo, 1936.
16. Loghat-Nama, Alī Akbar Dehkhodā, Tehran, 1325 (1946)—:

### Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

- Ակրրդարհա (ա.) -akrkaḥā, (հ.)—բողոց տակ—Pyrethrum Balsamita L.:
- Ակհալ (ա.)—akḥal, (հ.)—կենտրոնական մեծ երակ, հիմնական երակ—vena magna:
- Ամայի տղաղ (ա.)—am‘ā-yī daḳiḳ, (հ.)—բարակ աղիի ստորին հատվածը գալարաղի:
- Ամյայի-ի դուլին (ա.)—am‘ā-yī kūlī, (հ.)—խթաղիք—Colon:
- Անիսոն (ա.)—ānisūn, (հ.)—Անիսոն, կարար—Pimpinella Anisum L.:
- Աղաղիա (հ.)—Acacia Arabica W.:
- Աշախ, աշակ (հ.)—Dorema Ammoniacum D.:
- Բաւասիր (ա.)—bawāsīr, (հ.)—ավելորդ բուսած միւս, թուխք—Haemorrhoides:
- Բէն, բէջ (հ.)—թիակ, ուսագլուխ:
- Բուխար (ա.)—bukhār (հ.)—գոլորշի:
- Զահմէք (ա.)—zahmat, (հ.)—նեղութուն:
- Զարնապ (ա.)—zarnab, (հ.)—հալխունկ—Libanotis:
- Զաւհրայ (ա.)—zuhra, (հ.)—Արուսյակ մուրրակ—Venus:
- Զեհիր (ա.)—zahr, (հ.)—օձի կամ ալլ դեռանի թույն:
- Զէն (ա.)—ziān, (հ.)—միաս:

- Ջուճանի (ա.)—zudjadjī, (հ.)—ապակեմի—corpus vitreum:
- Ջռնեխ (ա.)—zarnīkh, (հ.)—Չառնիկ—Arsenicum:
- Ջոհալ (ա.)—zuḥal, (հ.)—Երևակ մոլորակ—Saturn:
- Ըռուտուպաթ (ա.)—ruṭūbat, (հ.)—հեղահյութ—humor:
- Ըրուհի տապալի (ա.)—rūhī tabī'ī, (հ.)—բնական հոգի, հոգու զորութուն:
- Ըսախաւուս (ա.)—asfūkhūduṣ, (հ.)—Եղնախոտ, Եղնա խոտ, արեղախոտ—  
Lavandula Stoechuc L.:
- Թարպեխ (ա.)—tarbi, (հ.)—Լուսնի փուլերից մեկը, ըստ երևույթին 1/4-ը:
- Թերքիպ (ա.)—tarkib, (հ.)—խառնվածք, բաղադրութուն, տվյալ դեպքում՝  
դեղախառնուրդ:
- Թրիաք (ա.)—tiryāk, (հ.)—ընդհանուր անուն, որոշակի բաղադրութամբ  
դեղախառնուրդի, որ դեռ շատ հին ժամանակներից համարվել է ընդ-  
հանրական միջոց դանազան թունավորումների դեմ—Theriak:
- Ինդիշար (ա.)—intishar, (հ.)—բրի լաջնանալուց լույսի ցրվելը:
- Իսնայշարիա (ա.)—ithnāa'shariyya, (հ.)—տասներկու մատնչա—duodenum:
- Լազիճ (ա.)—lazīdj, (հ.)—մածուցիկ:
- Լակուայ (ա.)—lakūa, (հ.)—գիմալին ներվի լուծանք—paralysis n. facialis:
- Լաաիֆ (ա.)—laʿlī, (հ.)—մեղմ, նուրբ, ախորժելի:
- Խապիաք (ա.)—khāssiāt, (հ.)—բնական զորութուն:
- Խոչակ (հ.)—larynx:
- Խոյ (հ.)—12 կենդանակերպերից առաջինը—Aries:
- Կիֆալ (հուն.)—κεφαλική, (հ.)—գլխի երակ—vena cephalica:
- Հալարուշա (հ.)—միզապարկ—vesica urinaria:
- Հայզ (ա.)—hā'id, (հ.)—դաշտան—menstruatio:
- Հաշայ (ա.)—hashā, (հ.)—Չամպուր, Իշածոթրին, Չիաթորին—Thymus  
capitatus L.:
- Հասըլ (ա.)—hāşil, (հ.)—պտուղ, բերք:
- Հերեքեթ-ի ինդպազ (ա.)—harakat-ī inkibād, (հ.)—կծկում, սեղմում, տվյալ  
դեպքում՝ արտաշնչում:
- Հերեքեթ-ի ինպիսաթ (ա.)—harakat-ī inbisāt, (հ.)—ընդարձակվել, լաջնա-  
նալ, տվյալ դեպքում՝ ներշնչում:
- Ղալղանդար (ա.)—kalqantār, (հ.)—արշասպ կանանչ—Couperous verte:
- Ղայսիում (ա.)—kaysum, (հ.)—Որձաբարձվենիկ, Համբարձում, սև օշինդր—  
Artemisia Abrotanum L.:
- Ղանգարին (ա.)—kanṭūryon, (հ.)—ծծմոր, Կապուտիկ, Կապուտածաղիկ—  
Centarea jacea L. B.:
- Ղուրս (ա.)—kūrş, (հ.)—մի քանի դեղամիջոցներից պատրաստված բարդ  
դեղախառնուրդ ներքին ընդունման համար:
- Ղուվաթ-ի հազիմայ (ա.)—kūwat-ī hādima, (հ.)—մարսեցնող ուժ:
- Ղուվաթի հազիպայ (ա.)—kūwat-ī djaziba, (հ.)—քարշող ուժ:
- Ղուվաթ-ի մասիքա (ա.)—kūwat-ī māsika, (հ.)—բռնող ուժ:
- Ղուվաթ-ի սայֆեայ (ա.)—kūwat-ī dāfi'a, (հ.)—դուրս քշող, վտարող ուժ:
- Ճալիաի (ա.)—djālidī, (հ.)—սսպնյակ—Lens crystallina:
- Ճաւշիր (ա.)—djāwshir, (հ.)—Չոշիր, Ճոշիր—Opopanax Chironium Koch.:
- Ճնաիաճայ (ա.)—djintjāna, (հ.)—Օձադեղ, օձի սխտոր, հոսոմ կրնչան—  
Gentiana lutea L.:

- Մահի զահրան (*պ.*)—māhī- zahradj, (*հ.*)—*Ձիան թույն, մահկասերմ*—*Menispermum Cocculus L.*:
- Մանեթ (*ա.*)—mirrikih, (*հ.*)—*Հրատ մուրակ*—*Mars*:
- Մաան (*ա.*)—ma'dan, (*հ.*)—*հանք*:
- Մեկթուա (*հ.*)—*մզլածու, բորբոսածու*:
- Միայ-ի ալար (*ա.*)—mi'ā-yī a'wār, (*հ.*)—*կուլր աղիք*—*intestimum coecum*:
- Միայ-ի մուքաղիմ (*ա.*)—mi'āyi mustakīm, (*հ.*)—*ուղիղ աղիք*—*intestinum*:
- Մուշարի (*ա.*)—mushtarī, (*հ.*)—*Լուսնթագ մուրակ*—*Jupiter*:
- Մուշկ (*ա.*)—mushk, (*հ.*)—*Թորդկուտց, Կոնկակուտց*—*Erodium gruinum Sol.*:
- Մաղալ (*ա.*)—mithkal, (*հ.*)—*քաշի միավոր, հալասար 5,1 գրամի*:
- Յազայի ընաւիայ (*ա.*)—a'dāyī ra'siyya, (*հ.*)—*ծառայող օրգաններ, ծալր-անդամներ*:
- Յամպեր (*հ.*)—*նաև Մշրուներ*—*Abelmoschus muschatus Moench.*:
- Յանապիայ (*ա.*)—anabiyyai, (*հ.*)—*ծիածանաթաղանթ*—*Iris*:
- Յանքապուրիայ (*ա.*)—a'nkabūtiya, (*հ.*)—*սարգոստենի, ցանցենի*—*Retina*:
- Յաւարա (*ա.*)—u'sara, (*հ.*)—*քամված հլութ, մզլած ք, նաև՝ քամել, ճմլել*:
- Նաւանի (*ա.*)—nafsānī, (*հ.*)—*շնչական, շունչ*:
- Նիսանի (*ա.*)—nīsānī, (*հ.*)—*երբայեցիների առաջին ամիսը, պարնանալին՝ հասարակածից սկսած՝ հաշվում է մարտի 22-ը*:
- Նուևայֆար (*հ.*)—*Nymphaea alba L.*:
- Շարայ (*ա.*)—sharay, (*հ.*)—*մաշկի վրա սոսքացած գնդասեղի գլխիկի մեծութիւն ցան, սրը քոր է գալիս*:
- Շեաարան (*ա.*)—shitaradj, (*հ.*)—*Պղպեղիկ, նվարախոտ, նվարտակ*—*Lepidium latifulium L.*:
- Շիրեան (*ա.*)—shiryān, (*հ.*)—*գարկերակ*—*arteria*:
- Պազիա (*ա.*)—baydiyya, (*հ.*)—*սպիտակուց*:
- Պապ (*ա.*)—bāb, (*հ.*)—*դուռ, ավլալ դեպքում՝ գրուլ*—*pylorus*:
- Պասիլիկ (*հուն.*)—*Բասիլիկ երակ*—*vena basilica*:
- Պուրն (*ա.*)—burdj, (*հ.*)—*կենդանակերպ*:
- Պօաուելիի ամաղ (*պ.*)—baft-i khunī-i damāgh, (*հ.*)—*ուղեղի արլան անոթներով հարուստ հլութած ք*:
- Պահման (*պ.*)—bahman, (*հ.*)—*Փշաքեղ*—*statice Limonium L.*:
- Սալիխա (*ա.*)—salikha, (*հ.*)—*Կասի, Ս. Գրիգորի ծառ*—*Cinnamomum Cassia B.*:
- Սահր (*ա.*)—sihr, (*հ.*)—*կախարդված, ավլալ դեպքում՝ ընկնալուրութլուն*—*epilepsia*:
- Սարվազ (*պ.*)—sarbaz, (*հ.*)—*զինվոր*:
- Սայիմ (*ա.*)—sā'im, (*հ.*)—*քաղցած աղիք*—*intestinum jejunum*:
- Սաքա (*ա.*)—sakta, (*հ.*)—*ուղեղալին կաթված*—*apoplexia cerebri*:
- Սուքպար ուլ լուապ (*ա.*)—thukbat ūl-lu'āb, (*հ.*)—*լեզվի վրա կղած փոքրիկ անցքեր, սրոնցից թուք է հոսում*:
- Սեվաա (*ա.*)—sawdā, (*հ.*)—*սև մաղձ*—*atrabilis*:
- Սուլպիա (*ա.*)—sulbiyya, (*հ.*)—*սնդեկներ*—*sclera*:
- Տալեհայն (*ա.*)—ṭālī'a, (*հ.*)—*բախտազուշակութլուն*:
- Տապաղա (*ա.*)—ṭabaḡa, (*հ.*)—*թաղանթ*—*membrana*:

- Տապաղայ-ի մուլթանիմա (ա.)—tabaka ī multahima, (հ.)—շաղկապենի—conjunctiva:
- Տապաղայ-ի դարունիա (ա.)—tabaka-ī karniyya (հ.)—հղջերենի—cornea:
- Տաֆ (ա.)—daf', (հ.)—փարատել, մի բանից աղատվել, հեռ մղել, վանել:
- Տեքնաա (հ.)—Cneorum L.:
- Տոգոբ (հ.)—ներծժվող, օրգանիզմից դուրս եկող նյութեր:
- Տպպա (ա.)—dabba, (հ.)—հատուկ պարկ հեղուկ նյութ պահելու համար:
- Փայվանդ (սլ.)—paywand, (հ.)—հողակապ:
- Փերաե (սլ.)—parda, (հ.)—վարագույր, տաղատ, ավլալ դեպքում՝ թաղանթ—membrana:
- Փիմոյ (հ.)—Օսոբ մի տեսակ պտուղ—Abies picea L.:
- Քամուքս (հ.)—պտուղների և բույսերի հյութը, որ ստացվում է ճնշումով, երկելով կամ այլ միջոցով:
- Քարաֆիս (ա.)—karaḥs, (հ.)—Քեղակարոս, Չիալախոս—Apiummontanum:
- Քամուն (թ.)—kammūn, (հ.)—Չաման, Քիմոն—Cuminum Cyminum L.:
- Քարուպար (սլ.)—kāhrubā, (հ.)—սաթ, բազմազանի ախի:
- Քաֆուր (ա.)—kāfūr, (հ.)—Քափուրենի—Cinnamonum aromaticum:
- Քեղիկոն (հ.)—աղանջակոնքի արտաքին պարարածե մասը:
- Քեսե (ա.)—kāsa, (հ.)—լալն բերանով աման, քլասա:
- Սաարիա (ա.)—'uṭārīd, (հ.)—Փալլածա մոլորակ—Mercurius:
- Ֆազլա (ա.)—īaḍla, (հ.)—մնացորդ, ավելցուկ:
- Ֆարֆիոն (թ.)—farfiyon, (հ.)—Կաղնջան, Աղանդակ—Eupharbia L.:

Д. М. КАРАПЕТЯН

ЕСТЕСТВЕННОНАУЧНЫЙ ТРУД ОВАСАПА СЕБАСТАЦИ  
«ОТМЕННЫЙ ЛЕЧЕБНИК КАРДИНАЛЬНЫХ ВЛАГ»

Резюме

На основании новых рукописных материалов Матенадарана им. Маштоца впервые вводится в научный оборот ценный естественнонаучный труд неизвестного в армянской филологии поэта-миниатюриста Овасапа Себастаци. Основными первоисточниками его лечебника были творчески усвоенные им труды классиков античной и средневековой медицины, а также мыслителей античной и средневековой армянской научной мысли. В своем труде Овасап Себастаци обращается к учению о четырех элементах, которое лежало в основе средневекового естествознания, толкуя его с точки зрения античной науки и видных средневековых армянских естествоиспытателей. Автор лечебника рассматривает на должном научном уровне вопросы эмбриологии, а также анатомии и физиологии внутренних органов. Отдельная глава лечебника посвящена физиологии пяти органов чувств.

Оценив научность труда армянского врача-ученого первой половины XVI в. Овасапа Себастаци, можно с полной уверенностью сказать, что как естествоиспытатель он занимает достойное место в средневековом армянском естествознании.

D. M. KARAPETIAN

L'OEUVRE SUR SCIENCES NATURELLES "TRAITE DE MEDECINE  
SUR LES HUMEURS CARDINALES" DE HOVASSAP SEBASTATZI

## R é s u m é

Se basant sur les nouveaux documents manuscrits du Maténadaran Mesrop Machtotz, l'auteur présente aux spécialistes un précieux ouvrage en sciences naturelles de Hovassap Sébastatsi, poète et miniaturiste bien connu dans la philologie arménienne. Les principales sources de son traité médical sont les oeuvres des classiques de la médecine antique et médiévale, ainsi que celles des représentants de la pensée scientifique arménienne antique et médiévale. Dans son oeuvre, Hovassap Sébastatsi a recours à la doctrine des quatre éléments, qui est à la base des sciences naturelles médiévales, l'interprétant du point de vue de la science antique et de celui des plus importants naturalistes médiévaux arméniens. L'auteur du traité de médecine examine au niveau scientifique requis les questions relatives à l'embryonologie, de même qu'à l'anatomie et à la physiologie des organes internes. Tout un chapitre du traité est consacré à la physiologie des cinq organes de sens.

Appréciant à sa juste valeur l'oeuvre de Hovassap Sébastatsi, médecin-chercheur arménien de la première moitié du XVI<sup>e</sup> siècle, on peut affirmer sans crainte de se tromper qu'en tant que naturaliste, il a apporté une contribution notable aux sciences naturelles médiévales arméniennes.